

**ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի 15-րդ փողոց 1/3 հասցեում 1,0հա հողամասում հանգստյան գոտու ճամբարի, ճաշարանի, տաղավարի, խաղահրապարակի, պահեստի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**



Green Life

«ԲԱՐԻ ՄԱՄԱ» բարեգործական ՀԿ տնօրեն՝

Մ. Ադուլյան

Երևան 2023թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր .....	4
2. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը .....	4
3. Նախատեսվող գործունեության փորձաքննական գործընթացը.....	9
4. Նախատեսվող գործունեության ձեռնարկողը, գործունեության գտնվելու վայրը, նպատակը.....	10
5. Նախնական գնահատման հայտի մշակման հիմքերը .....	10
6. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը .....	11
6.1. Ենթակա տարածք .....	11
6.2 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի շրջակա միջավայրի նկարագիրը ....	16
6.2.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ. ....	16
6.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն .....	17
6.2.3. Կլիմա և օդային ավազան.....	18
6.2.4 Հողային ռեսուրսներ .....	23
6.2.5 Ջրային ռեսուրսներ .....	25
6.2.7 Բնության Հատուկ պահպանվող տարածքներ.....	37
6.2.8 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	37
6.2.9 Բնության հուշարձաններ.....	40
6.2.10 Սոցիալական .....	42
7. Նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, բնառեսուրսներ.....	45
7.1 Տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները.....	45
7.2 Շինարարության փուլ .....	47
7.3 Հողային աշխատանքներ.....	49
7.4 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, շինարարական աշխատանքներ .....	49
7.5 Ժամանակացույց .....	50
7.7 Էլեկտրամատակարարում .....	51
7.8 Ջերմամատակարարում և օդափոխություն .....	51
7.9 Ջրամատակարարում. Ջրահեռացում.....	51
7.10 Աղբահանություն.....	52
7.11 Կանաչապատում, բարեկարգում.....	52

<b>7.12</b>	<b>Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.</b>	<b>52</b>
<b>8.</b>	<b>Շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջություն վրա հնարավոր ազդեցությունները՝ շինարարության և շահագործման փուլերում</b>	<b>56</b>
<b>8.2</b>	<b>Հողային ռեսուրսներ.</b>	<b>57</b>
<b>8.3</b>	<b>Ջրային ռեսուրսներ.</b>	<b>58</b>
<b>8.4</b>	<b>Կենսաբազմազանություն.</b>	<b>59</b>
<b>8.5</b>	<b>Թափոններ</b>	<b>60</b>
8.6	Աղմուկ և թրթռում	61
8.7	Արտակարգ իրավիճակներ	61
8.8	Պատմամշակութային և բնության հուշարձաններ	62
<b>8.9</b>	<b>Աշխատանքի անվտանգություն. Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները</b>	<b>62</b>
<b>8.10</b>	<b>Սոցիալական.</b>	<b>63</b>
<b>8.12</b>	<b>Բարեկարգում և կանաչապատում</b>	<b>63</b>
<b>9.</b>	<b>Շրջակա միջավայրի վրա ազդեցության վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը /Բնապահպանական կառավարման պլան/</b>	<b>65</b>
<b>9.1</b>	<b>Օդային ավազան.</b>	<b>65</b>
<b>9.2</b>	<b>Հողային ռեսուրսներ.</b>	<b>65</b>
<b>9.3</b>	<b>Ջրային ռեսուրսներ.</b>	<b>66</b>
<b>9.4</b>	<b>Կենսաբազմազանություն.</b>	<b>67</b>
<b>9.5</b>	<b>Թափոններ.</b>	<b>67</b>
<b>9.6</b>	<b>Աղմուկ և թրթռում</b>	<b>68</b>
<b>9.7</b>	<b>Արտակարգ իրավիճակներ.</b>	<b>68</b>
9.8	Պատմամշակութային և բնության հուշարձաններ	68
<b>9.9</b>	<b>Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն.</b>	<b>69</b>
9.10	Սոցիալական.	70
9.11	Լանդշաֆտ. բարեկարգում, կանաչապատում.	70
<b>10.</b>	<b>Մոնիթորինգ.</b>	<b>71</b>
<b>10.</b>	<b>Մոնիթորինգ.</b>	<b>71</b>
	<b>Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան</b>	<b>73</b>
<b>12.</b>	<b>Սշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ</b>	<b>83</b>
<b>13.</b>	<b>Հանրային քննարկումներ</b>	<b>86</b>
	<b>Օգտագործված հապավումները</b>	<b>86</b>
	<b>Գրականություն</b>	<b>86</b>

## 1. Զ Ա Վ Ե Լ Վ Ա Ճ Ն Ե Ր

- Չավելված 1.** Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը
- Չավելված 2.** . ԶԶ Գեղարքունիքի մարզի ճամբարակ համայնքի կողմից տրամադրված նախագծման թույլտվության /ճարտարապետահատակագծային առաջադրանք/
- Չավելված 3.** Տարածքի հատակագիծը
- Չավելված 4.** Կադաստրային քարտեզը ` ARM WGS-84 կոորդինատներով
- Չավելված 5.** Աղբահեռացման պայմանագիր
- Չավելված 6.** Էներգամատակարարման տեխպայմանը
- Չավելված 7.** «Սևան»ԱՊ ՊՈԱԿ-ի գրությունը տարածքի վերաբերյալ
- Չավելված 8.** Մաքրման կայանի բնութագիրը
- Չավելված 9.** Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկը
- Չավելված 10.** Համայնքի նախնական համաձայնությունը

## 2. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ԶԶ օրենքում փոփոխություն կատարելու մասին (2023թ.մայիսի 3),(այսուհետ Օրենք)- կարգավորում է հիմնադրութային փաստաթղթերի (ՇՄԱՌԳ) և նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատումները (ՇՄԱԳ), դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Համաձայն օրենքի լիազոր մարմինը՝ շրջակա միջավայրի նախարարությունը իրականացում է հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության փորձաքննություն, տրամադրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ԶԶ օրենք (ՅՕ-522-Ն (ընդունված 19994թ. և լրամշակված 2022թ.)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:
- «Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ԶԶ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման

հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)-սահմանում և կարգավորում է իրավական և քաղաքականության հիմքերը ՀՀ տարածքում պատմամշակութային անշարժ հուշարձանների, պատմական միջավայրի պահպանության և օգտագործման համար, կանոնակարգում է պահպանության և օգտագործման իրավահարաբերությունները:
- ՀՀ Հողային օրենսգիրքը (2001 թ.) - սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպական իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:
- «Բուսական աշխարհի մասին» (1999) ՀՀ օրենք-նպատակը բուսական աշխարհի, կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Կարգավորում է ՀՀ բույսերի պահպանության պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է նաև Էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000)–նպատակը կենդանական աշխարհի պահպանության ապահովումն է: Կարգավորում է կենդանական աշխարհի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է Էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:
- «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը-(15.05.2001թ.)- կարգավորում է Սևանա լճի, նրա ջրհավաք ավազանի և տնտեսական գործունեության գոտու Էկոհամակարգերի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Սահմանում է Սևանա լճի, որպես Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանի՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության Էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները:
- «ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է: Սահմանում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և

հասարակության պարտավորությունները, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակման կարգը, պետական ջրային կադաստրի և մոնիթորինգի, ջրային ռեսուրսների օգտագործման թույլտվություն տրամադրող համակարգերի ստեղծումը, անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործումը, ջրի որակի չափանիշները, հիդրոլոգիական կառուցվածքների շահագործման անվտանգության խնդիրները, ջրային ռեսուրսների պահպանություն և պետական վերահսկողությունը: Ապահովում է հանրության համար համապատասխան տեղեկատվության մատչելիությունը:

- «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006) և «Հայաստանի հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին(21.12.2015թ.) ՀՀ օրենք-կարգավորում է Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները, ընդգրկելով ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները, ելնելով ջրի սահմանափակ լինելու, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանման համար հիմնական միջոցներից մեկը հանդիսանալու, դրա մատչելիության ապահովման նախապայմաններից:
- «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք (2005) - նպատակը մարդու բարեկեցության, հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման, տնտեսական և էկոլոգիական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ քանակի, ռեժիմի և որակի ջրային ռեսուրսների մատչելիության ապահովումն է: Սահմանում է ջրային ռեսուրսների կայուն կառավարման, օգտագործման և պահպանության գերակայությունները, ջրային ռեսուրսի հաշվառումը և գնահատումը, առաջարկի և պահանջարկի ձևավորումը, ջրավազանային կառավարման հետ կապված հարաբերությունները:
- «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:
- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

■ ՀՀ Անտառային օրենսգիրք (2005թ.)-Կարգավորում է Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները: Հայաստանի Հանրապետությունում անտառներն, անկախ սեփականության ձևից, ըստ

իրենց հիմնական նպատակային նշանակության դասակարգվում են՝ պաշտպանական, հատուկ, արտադրական:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)- կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

### **ՀՀ կառավարության որոշումներ.**

- «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները - սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, անորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:
- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշումը-սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 9-ի N80-Ն որոշում- «Հայաստանի հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» -սահմանում է ՀՀ հուշարձանների ցանկը՝ համաձայն որոշման 5-րդ հավելվածի:
- ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի N385-Ն որոշում- ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին»- սահմանում է ՀՀ հուշարձանների ցանկը՝ համաձայն որոշման 5-րդ հավելվածի:
- «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն ՀՀ կառավարության որոշում – Սահմանում է ՀՀ բնության հուշարձանների ցանկը՝ համաձայն որոշման հավելվածի:
- «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.09.2014թ.

N1059-Ա որոշում – Հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի, Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:

- «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության եվ օգտագործման բնագավառներում ռազմավարությանը եվ գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 10.12.2015թ. նիստի N54 և «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 27.05.2015 նիստի N23 արձանագրային որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:
- 5.8 ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ հաստատված ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱԴՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ:
- ՀՀ կառավարության 2008թ.դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշում «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ԿԱՌՈՒՑԱԴՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԶԱՂԱԶԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ:
- ՀՀ կառավարության 2002թ. N 57 որոշում ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՅԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ, ԿԵՆՍԱԾԻՆ ՏԱՐԵՐԻ, ԾԱՆՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
- ՀՀ կառավարության 19 նոյեմբերի 2014թ. «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N1325-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N927-Ն որոշում՝ «Սևան» ազգային պարկի կանոնադրություն»:
- «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N205-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 30.09.2020թ. թիվ 1293-Լ որոշում՝ «Սևանա լճի Էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնական զարգացման և օգտագործման 2020թ. միջոցառումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին»:
- 2004 թվականի N 766-Ն 13 մայիսի «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 1908.0 ՄԵՏՐ ԲԱՑԱՐՁԱԿ ՆԻՇԻՑ ՑԱԾՐ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱԴՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 927-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՉ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

- ❑ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում՝ «Հանրային ծանուցման ելքն արկունների իրականացման կարգը սահմանելու մասին» :
- ❑ ՀՀ կառավարության 2011թ. 27 հունվարի N 75-Ն որոշում՝ «ԿԱԽՎԱԾ ՏԵՂԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԶՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
- ❑ ՀՀ կառավարության 29 սեպտեմբերի 2022 թվականի «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՅԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՅՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1520 – Ն որոշում:
- ❑ ՀՀ կառավարության 30 սեպտեմբերի 2021 թվականի «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՅԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՅՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1584 – Ն որոշում
- ❑ ՀՀ կառավարության 23 մարտի 2006 թվականի «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԶՐԱՎԱԿՔ ԱՎԱԶԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ԴՈՒՐՍ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ» N 397-Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ
- ❑ ՀՀ կառավարության 8 հոկտեմբերի 2009 թվականի «ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԿՈՅՈՒՂԱՑԱՆՑ ՉՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՈՅՈՒՂԱԶՐԵՐԻ ՏԵՂԱՅԻՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1142-Ն որոշում:
- ❑ ՀՀ կառավարության 8 փետրվարի 2018 թվականի «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱՉ ԳՈՏԻՆԵՐԻ ՉՓԵՐԻՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅՊԱՆՁՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1318-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 108-Ն որոշում:

### 3. Նախատեսվող գործունեության փորձաքննական գործընթացը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի ՀՕ-110 ՀՀ Օրենքում՝ 2023թ. մայիսի 3-ի փոփոխություններ կատարելու մասին օրենքի(այսուհետ՝ Օրենք)՝ սահմանված դրույթներին համապատասխան: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրության փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները: Բոլոր նախատեսվող գործունեությունները, որոնք կարող են ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա, և Բ: Ներկայացվող նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա

ազդեցության գնահատման և փորձաքննության համաձայն՝ Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետի՝ «Փորձաքննության ենթակա են նաև սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում չթվարկված՝ Կառավարության հաստատած գործունեության տեսակները, որոնք իրականացվելու են բնության հատուկ պահպանվող տարածքներում կամ անտառային հողերում կամ բնակավայրերի կանաչ գոտիներում կամ պատմամշակութային հուշարձանների սահմաններում կամ բնապահպանական հողերում, և որոնք ներառված չեն պետական փորձաքննական դրական եզրակացությունն ստացած հիմնադրույթային փաստաթղթերում: Այս դեպքում փորձաքննությունն իրականացվում է Բ կատեգորիայի ընթացակարգով»:

«ԲԱՐԻ ՄԱՍԱ» Բարեգործական ՀԿ-ի կողմից Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի 15-րդ փողոց 1 հասցեում՝ Նախատեսվող գործունեությունը համաձայն Օրենքի ենթակա է շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության Բ կատեգորիայի ընթացակարգով, որը պայմանավորված է Օրենքի 12-րդ Գլուխ, 37-րդ հոդվածի (եզրափակիչ մաս և անցումային դրույթներ) պահանջներով:

#### **4. Նախատեսվող գործունեության ձեռնարկողը, գործունեության գտնվելու վայրը, նպատակը**

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի 15-րդ փողոց 1/3 հասցեում՝ «ԲԱՐԻ ՄԱՍԱ» Բարեգործական ՀԿ-ի կողմից, որի հրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Գ. Նժդեհ՝ 46:

Համաձայն «Սևան»ԱՊ-ի կողմից տրված գրության՝ կառուցապատումը կատարվելու է «Սևան»ՊՈԱԿ-ի Արտանիշի մ/ճ Դրախտիկ տեղամասի 8-րդ քառակուսու 2-րդ անտառամասի ռեկրացիոն գոտում, Սևանա լճի ափամերձ հատվածում՝ հանգստի համար նախատեսված գոտում: Տարածքը գտնվում է ծովի մակարդակից 1905մ բարձրության վրա, (40030' 08"45015' 1B'E) 3,06 կմ:

Տարածքի հողի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված:

Գործունեության նպատակն է «Սևան» ազգային պարկի հանգստի գոտում՝ 1,0հա տարածքի վրա կառուցել ճամբար, ճաշարան, տաղավար, խաղահրապարակ, պահեստ՝ համապատասխան ենթակառուցվածքներով և պայմաններով, երեխաների ամառային հագիստը կազմակերպելու նպատակով: Տարածքի ճարտարապետական լուծումները՝ դիրքը և վայրը, հնարավորություն կստեղծեն երեխաների հանգիստը կազմակերպել Սևանա լճի ափին:

#### **5.Նախնական գնահատման հայտի մշակման հիմքերը**

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի վարչական տարածքում՝ Սևան ազգային պարկի

ռեկրացիոն գոտում, Սևանա լճի ափամերձ հատվածում: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1,0 հա:

Հայտը մշակվել է հիմք ընդունելով.

- Սեփականության իրավունքի վկայականը՝ N 02032020-05-0046 (Հավելված 1.):
- ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի ղեկավարի կողմից 2023թ. ապրիլի 17-ին տրամադրված նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) (Հավելված 2):
- Կադաստրային քարտեզը՝ ARM WGS-84 կոորդինատային համակարգով:
- Նախատեսվող գործունեության նախագծային փաստաթուղթը:
- Համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:

## **6. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը**

### **6.1. Ենթակա տարածք.**

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական սահմանում, «Սևան» ԱՊ-ի հատուկ պահպանվող տարածքում՝ Սևանա լճի ափամերձ հատվածում: Տարածքը հարակից է միջպետական ճանապարհին: Տարածքի ռելիեֆը հիմնականում հարթ է, ունի մասնակի թեքություն: Կից գտնվում են միջպետական ճանապարհը և հանգստյան գոտիներ: Գործունեության տարածքում գոյություն ունեն կիսակառույց շինություններ:

Նախատեսվող տարածքի հողամասի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված:

Համաձայն «Սևան» ԱՊ-ի կողմից տրված գրության՝ տարածքն անտառապատ է՝ ՏՐԽ Շ3 անտառային տիպով: Հիմնականում գերակշռում են ասեղանատերևավոր տեսակները՝ սոճին սովորական ( *Pinus silvestris* L.) և սոճենի Ղրիմյանը ( *Pinus nigra* subsp. *Pallasiana* L.), ընդհանուր 500 հատ քանակով: Ծառերը միջին տարիքի են՝ 23-40, բարձրությունը՝ 6-17մ, 0,4 լրիվության ցուցանիշով, ոչ հավասարաչափ, պատկանում են 3-րդ բոնիտային դասին: տարածքում առկա են նաև մեկ տասնյակ դեղին ակացիայի թփեր (*Caragana Arutex*)՝ 1-3մ բարձրությամբ:

Գործունեության տարածքի հողային տեսքը ավազային է, բացակայում է խոտածածկը:

Տարածքում բացակայում են ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման համակարգերը: Առկա է միայն էլեկտրամատակարարում:

Նախատեսվող գործունեության վայրի իրադրության սխեման



12

ՏԵՂԱԴԻՐՔԱՅԻՆ ՀԱՏԱՎԱԳԻԾ Մ 1:5000



ՀԱՄԱՁԱՅՆՅՑՎԱԾ Է

ՀՀ ՁԵՂԱԴՐՔԻՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՃԱՄԱՐՈՒՄԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՆՎԱՐ

Վ. ԱՂԱՄՅԱՆ

Հարևան հողատարածք  
Նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների  
Հողատեսքը հանգստի համար նախատեսված

ՀՀ ՁԵՂԱԴՐՔՈՒՆԻՔԻ մարզ, համայնք Շողակաթ գյուղ Շողակաթ 15-րդ  
փողոց 1/3 հողամաս  
Նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների  
Հողատեսքը հանգստի համար նախատեսված

Հարևան հողատարածք  
Նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների  
Հողատեսքը հանգստի համար նախատեսված

Հարևան հողատարածք  
Նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների  
Հողատեսքը հանգստի համար նախատեսված

Սևանա լիճ



Շարժական  
տնակներ

Շարժական  
տնակներ

Սևանա լիճ

Շողա 1 հանգստի գոտի




Փոփոխություն	Ամիսամսաթիվ	Դիտողություն	Հեղինակ	Ստորագ
 ԵՐԵՎԱՆ 2023թ.	 Վ. Աղազյան Նախագծի Զ. Ղարիբյան	ՊԱՏՎՈՐԱՑՈՒ - <<ԲԱՐԻ ՄԱՍԱ>> ԲԱՐԵՂՈՐԾՎԱԿԱՆ ՀՎ	ՍԵՂԱԳՐԱՅԻՆ ՓՈՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԽՈՒՆՆԵՐՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՑՈՒՄ	Սեյախանբախյան նախագիծ
		ԵՄԲԶԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ		Քաղին ՃՀ
		Տեղադիրքային հատագիծ Մ 1:5000		Թերթեր 1 3

Ինչպես երևում է ներկայացված իրադրային հատակագծից, գործունեության ելթակա տարածքին կից տարածքները հատուկ պահպանվող նշանակության տարածքներ են նախատեսված հանգստի համար: Գործունեության տարածքի սահմանին ամենամոտ հեռավորությունների վրա գտնվում են շարժական շինություններ՝ սկսած 1 մետրից մինչև 144մետր հեռավորության վրա:


Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ հաստատված «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱԴԱՍՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԻՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ» (այսուհետ որոշում)՝ «Դրախտիկ» տարածքային հատվածը՝ 14 կմ երկարությամբ նեղ ափամերձ հատված է, որին կից անցնում է Ս-14 մայրուղին: Հատվածը բնորոշվում է խիստ ռելիեֆով, ամենանեղ մասում ունի 30մ լայնություն, ամենալայնում՝ 300մ: Ռելիեֆն ունի կտրուկ անկումներ: Այստեղ նախատեսվել են մեկ հարկանի կառուցապատման գոտիներ /ՀԿԳ-1/, հասարակական օգտագործման կանաչ գոտի /ՀՕԿԳ/, հասարակական սննդի և սպասարկման գոտի /ՀՍՍԳ-1/ և բնական լանդշաֆտի պահպանման գոտի /ԲԼՊԳ/ 20-25% կառուցապատման և 75-80% կանաչապատման մակերեսներով:

Նկար 1


10.4. «Դրախտիկ» տարածքային հատված



Նախատեսվող գործունեության կառուցապատման չափորոշիչները որոշվել են հիմք ընդունելով Ճամաբարակի համայնքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի և ՀՀ կառավարության N 177-Ն որոշման պահանջները: Կառուցապատման համար հիմք է հանդիսացել նաև համայնքի տարածքի ռելիեֆային առանձնահատկությունները, բնական ու ինժեներաերկրաբանական պայմանները, համայնքի համաձայնությունը:



### Գծապատկեր 1.



Տարածքում առկա է 500 հատ սոճի, որոնք գործունեության իրականացման ընթացքում պահպանվելու են, չեն հատվելու:

Գործունեությունն իրականացվում է Սևանա լճի ափամերձ հատվածում՝ 38,5մ հեռավորության վրա:

Գործունեության ենթակա տարածքում չկան բնության, պատմամշակութային հուշարձաններ: Գործունեության տարածքին ամենամոտ բնության հուշարձանը գտնվում է 1,1կմ, իսկ բնության հատուկ պահպանվող «Սևան» ԱՊ-ն է, որի սահմաններում իրականացվում է գործունեությունը:

Գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկվել է մարդու անմիջական ազդեցությանը, քանի որ Սևան լճի ափամերձ հատվածներն օգտագործվում են որպես հանգստի գոտի:

## **6.2 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի շրջակա միջավայրի նկարագիրը**

### **6.2.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ.**

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ խոշորացված համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական տարածքում՝ «Սևան»ԱՊ-ի Սևանա լճի ափամերձ հատվածում: Մարզը սահմանակից է Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից սահմանակից է Ադրբեջանին: Գեղարքունիքի մարզը հիմնականում զբաղեցնում է Սևանա լճի ջրհավաք ավազանը: Մարզի գլխավոր լեռնաշղթաներն են՝ Գեղամա, Արեգունի, Սևանի Արևելյան Սևանի, Վարդենիսի, որտեղ առկա են տասնյակ հրաբխային կոներ՝ հատկապես ուշագրավ են Աժդահակ և Արմաղան հրաբուխները: Լեռների ձագարածն խառնարաններում գոյացել են գեղեցիկ լճակներ: Արեգունու և Սևանի լեռնաշղթաների Գեղարքունիքի մարզի սահմաններում գտնվող լանջերը զառիթափ են ու կտրտված, իսկ Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների դեպի Սևանա լիճ նայող լանջերը համեմատաբար մեղմաթեք են:

Green Life


Նկար 2



Գրունտների առավելագույն արագացումները գրանցված են Սևանա լճի հյուսիս-արևելյան և արևելյան ափերում:

Համաձայն 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04\_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերում» ներառված և ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հաստատված քարտեզի՝ տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների  $A_{max} = 0.4g$  արագացմամբ:

Նկար 3



### 6.2.3. Կլիմա և օդային ավազան

Տարածաշրջանի կլիման չորային է: Ձմռանը գերիշխում է պարզ արևոտ թույլ սառնամանիքներով եղանակը (15-17 օր ամսվա ընթացքում), ձմռանը չափավոր ցուրտ է: Ամառը տաք է, չոր և անհողմ: Գարնանից ամառ անցումը տեղի է ունենում աստիճանաբար՝ շնորհիվ լճի ջրային ավազանի ազդեցության:

Սևանա լճի ջրիավաք ավազանում կլիմայի ձևավորման հիմնական գործոններն են արևի ճառագայթումը և մթնոլորտային շրջապտույտը: Արևային ժամերի քանակը

տարեկան տատանվում է 2600-2800-ի միջև: Սևանա լճի կենտրոնական գոտու տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Ամենամեծ և ամենափոքր կլիմայական պայմանները դիտվում են լճի արևմտյան ափին, որտեղ օդի ջերմաստիճանի կարող է իջնել մինչև  $-36^{\circ}\text{C}$ :

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները ճամբարակ քաղաքի համար՝ որպես խոշորացված համայնք:

Օդի ջերմաստիճանը,  $^{\circ}\text{C}$

Աղյուսակ 1

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների $^{\circ}\text{C}$												Միջին տարեկան	Բացարձակ	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Ճամբարակ	1853	-5,	-4,5	-1,6	4,4	9,0	11,9	14,5	14,3	11,1	6,5	1,9	-2,8	5,0	-28	33

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 2

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Ճամբարակ	68	69	71	69	75	78	80	80	76	74	70	69	73	64	67

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Աղյուսակ 3

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մթնոլորտային տեղումների քանակի և ձնածածկույթի քանակի		Ձյան ծածկույթը	
	ըստ ամիսների	տարե-տասնօրյ	օրերի	ջրի առա-

	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Կան	ա առավել ա- գույնը, սմ	թիվը	վելագույն քանակը ձյան մեջ, մմ
ճամբարակ	<u>22</u> 17	<u>27</u> 24	<u>41</u> 29	<u>57</u> 48	<u>97</u> 63	<u>94</u> 46	<u>65</u> 61	<u>46</u> 46	<u>43</u> 51	<u>52</u> 45	<u>41</u> 76	<u>23</u> 28	<u>608</u> 76	72	109	99

Աղյուսակ 4

Աղյուսակ 1.4. Քամի

Քննակա- վայրի, օդերևու- թաբա- նական կայանի անվա- նումը	Միջին տարե- կան մթնո- լորտա- յին ճնշումը, (հՊա)	Ամիս- ներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Անհող մու- թյուն- ների կրկնե- լիու- թյունը, %	Միջին ամսա- կան արա- գու- թյու- նը, մ/վ	Միջին տարեկ ան արա- գու- թյունը, մ/վ	Ուժեղ քամի- ներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագու- թյունը, մ/վ, որը հնարա- վոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Հյու- սիսայ ին (Հս)	Հյու- սիս- արևել յան (ՀսԱր լ)	Արևել յան (Արլ)	Հա- րավ- արևել յան (ՀվԱր լ)	Հա- րավա յին (Հվ)	Հա- րավ- արևմ- տյան (ՀվԱր մ)	Արևմ տյան (Արմ)	Հյու- սիս- արևմ տյան (ՀսԱր մ)					25	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Ճամ- բարակ	814,1	հուն- վար	3	4	5	5	7	40	29	7	74	4,2	2,8	-	24	26	27
		-	-	-	-	-	-	-	-	-	-						
		ապրիլ	5	13	12	6	9	32	17	6	70	3,0					
		-	-	-	-	-	-	-	-	-	-						
		հուլիս	4	40	35	9	4	3	2	3	61	1,6					
		-	-	-	-	-	-	-	-	-	-						
հոկ- տեմբեր	5	17	16	9	6	23	16	8	63	2,2							
-	-	-	-	-	-	-	-	-	-	-							


Համաձայն նորմատիվային փաստաթղթի՝ Ճամբարակ համայնքը գտնվում է ծովի մակարդակից 1853մ բարձրության վրա՝ ցուրտ կլիմայական գոտում: Զաղաքին բնորոշ են զով, քամոտ ամառը՝ օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C է, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0-6.0 մ/վ:

Ձմեռը՝ շատ ցուրտ է, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ մինուս 5°C-ից մինչև մինուս 12°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 70% և ավելի, քամու միջին արագությունը՝ 5.0-7.0 մ/վ:

**Օդային ավազան:** Մթնոլորտային օդի որակի ուսումնասիրությունները կատարվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 45 օդերևութաբանական դիտակետերի միջոցով:



Նկար 5



Իսկ Հայէկոմոնիտորինգ ձեռնարկ-ուղեցույցի<sup>1</sup> ըստ բնակչության թվաքանակի համաձայն օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները<sup>2</sup> ժամկետանց են:

Այնուամենայնիվ ներկայացվում է Հայէկոմոնիտորինգ ձեռնարկ-ուղեցույցի<sup>2</sup> համաձայն՝ մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Շողակաթ բնակավայրի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները<sup>2</sup>:

- Փոշի՝ 0.2 մգ/մ<sup>3</sup>;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ<sup>3</sup>;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ<sup>3</sup>;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ<sup>3</sup>:

#### 6.2.4 Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածաշրջանին բնորոշ է մարգագետնասևահողային հողային տիպի սևահող տիպիկ, ալրային կարբոնատային ենթատիպը: Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում զգալի հարթ տարածություններ կան, առկա են շատ որակյալ հողեր և նպատակահարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է՝ շուրջ 10000 հեկտար: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900-2200մ բարձրություն: Տարածքը ներկայացած է միջին բարձրությամբ լեռնաշղթաներով, ուղիղ և ալիքաձև թեքություններով և հարթություններով: Տարածքում գերիշխում են տափաստանային և կարբոնացված անտառային դարչնագույն հողերը, որոնք ձևավորվել են կարբոնատային, խճաքարային բերվածքների վրա: Մարզի հարավային և արևմտյան հատվածների հողային ծածկույթը հիմնականում ներկայացված է սևահողերով և գետահովտադարավանդային հողերով, իսկ հյուսիսային և հյուսիսարևելյան հատվածները՝ մարգագետնատափաստանային, անտառային դարչնագույն և անտառային գորշ հողերով: Տարածաշրջանում լճային նստվածքների վրա ձևավորվել են գետահովտային, մարգագետնացած կոպճային և թույլ զարգացած ավազակոպճային հողագրունտների տիպերը: Սևանի ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրները:

Նկար 6

Green Life



Մարզի խոշոր հիմնախնդիրներն են՝ հողերի դեգրադացումը, Էռոզիան, ավիամերձ գոտու անտառների ջրածածկումը: Մարզի հողային ծածկույթի Էրոզիայի առավելագույն ցուցանիշները դիտարկվում են արևելյան և հյուսիսային հատվածներում:

Համաձայն Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագի՝ Սևանի տարածաշրջանում մեծ զանգվածներով հանդիպում են տիպիկ միջին հումուսային ավալացված սևահողերը՝ լեռնային սևահողերի ենթատիպով: Հումուսի պարունակությունը կազմում է 8-12%: Լեռնային սևահողերն ունեն հումուսի մեծ պաշար՝ 0-60սմ խորության վրա հումուսի պաշարները կազմում են 360տ/հա:

Ռեակցիան վերին հորիզոններում թույլ հիմնային է, ներքևում՝ չեզոք:

Լեռնային սևահողերն օգտագործվում են մեծ մասամբ որպես խոտհարք և արոտավայր, իսկ տեղ-տեղ նաև որոշ գյուղատնտեսական կուլտուրաների մշակման համար (գարի, երկարամյա խոտեր): Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով:

Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

«Հիդրոոդերոնուկաբանության և մոնիթորինգի կենտրոն»ՊՈԱԿ-ի Էլեկտրոնային կայքում, 2022թ տարեկան և 2023թ. 2-րդ եռամսյակի տեղեկագրերում, հողերում մետաղների պարունակության և աղտոտվածության ցուցանիշների վերաբերյալ

տեղեկատվությունը ներկայացված է միայն Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքը, իսկ այլ բնակավայրերի (Ներառյալ ճամաբարակ համայնքը) տեղեկատվությունը բացակայում է:

### 6.2.5 Ջրային ռեսուրսներ

Սևանի ավազանի հիդրոերկրաբանական պայմանները բնորոշվում են երկրաբանա-կառուցվածքային, գեոմորֆոլոգիական և ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկություններով: Սևանի ջրավազանային տարածքը ներառում է Ձկնագետ, Մասրիկ, Սոթք գետերի գետավազանները, Վարդենիսի ու Գեղամա լեռներից սկսվող գետերը: Ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային և արտադրական կեղտաջրերը: Սևանի ջրավազանային տարածքում ստորերկրյա ջրերի քանակի և որակի նշանակալի փոփոխություններն աննշան են, պայմանավորված բնական պայմաններով՝ ամռան ամիսներին ոռոգման նպատակով հորերի ջրածախսի ավելացմամբ:

Տարածաշրջանի ամենամեծ ջրային ռեսուրսը Սևանա լիճն է:

**Սևանա լիճ.** Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձևալուծքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Սևանա լիճը, Հայաստանի Հանրապետության համար ունի գեոքաղաքական մեծ նշանակություն, որպես տարածաշրջանային քաղցրահամ ջրի միակ հսկայական աղբյուր: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավարևելյան կամ Մեծ Սևան, հյուսիսարևելյան կամ Փոքր Սևան: Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Լճի ջրահավաք ավազանում մթնոլորտային տեղումները, կախված են տեղանքի բարձրությունից՝ տարեկան 400մմ-ից (լճի առափնյա շրջանում) մինչև 900 մմ-ի (շրջապատի լեռների մերձագագային շրջանում), միջինը՝ 500-600 մմ: Տարվա ընթացքում լճի հայելու վրա տեղումների միջին քանակը կազմում է 390 մմ:

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ հաստատված «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ»՝ լճի երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ<sup>2</sup>, որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Ափի շրջագիծը մոտ 230 կմ է, միջին խորությունը 26.8 մ է, ամենախորը վայրը՝ 83 մ (Փոքր Սևան): Սևանա լիճը Շորժայի ստորջրյա թմբով բաժանվում է 2 մասի՝ Մեծ Սևանի և Փոքր Սևանի: Լիճը գտնվում է Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա, որի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147,456 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22,585 հա: Պահպանական գոտու տարածքը կազմում է 342,920 հա: Սևանա լիճ են թափվում 28 գետ և

գետակ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը: Սևանա լճի ջրահավաք ավազանում տարեկան գումարային տեղումների բաշխումը Խորհրդային կառավարման տարիներին լճի մակարդակը զգալիորեն իջել է (18 մ), ինչի հետևանքով տարածաշրջանում առաջացել է Էկոլոգիական խնդիր: Ջրի մակարդակի բարձրությունը վերականգնելու համար կառուցվել է Արփա–Սևան (48.3 կմ, 1963-81 թվականներ), ապա՝ Որոտան–Արփա դերիվատացիոն ջրատարները (21.6 կմ, 2004 թ.):


Համաձայն 2014թ. «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկոլոյցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվել և իրականացվում են Սևանա լճի և ջրհավաք ավազանի Էկոհամակարգերի պահպանության, Էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և կենսաբազմազանության բնականոն զարգացման ու բնական պաշարների կայուն օգտագործման միջոցառումներ: Սևանա լճի ավազանի համայնքների զգալի մասում ոռոգման նպատակով հիմնականում օգագործվում են Սևանա լիճ թափվող գետերի ջրերը, որոնց մեծ մասն անկանոն է և չվերահսկվող, ոռոգման հետևանքով ամառային ամիսներին ցամաքում են՝ զգալի վնաս հասցնելով գետերում ձկնատեսակներին՝ Սևանի կողակին, Ամառային իշխանին, Գեղարքունիքին և Սևանի բեղլուին, որոնք կորցնում են բազմացման համար անհրաժեշտ միջավայրը և պայմանները: Սևանա լճի համար գերխնդիր է նաև հարակից բնակավայրերից, արտադրական օբյեկտներից և լճի շուրջը կառուցապատված հանգստյան տներից լիճ թափվող կեղտաջրերի խնդիրը՝ մարզի արտանետվող կեղտաջրերի շուրջ 80%-ը չեն մաքրվում:

Մաքման կայանների նախատեսումը և ափամերձ ջրածածկ հատվածների մաքրումը Սևանա լճի համար խիստ անհրաժեշտություն է: Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով լճի ափամերձ տարածքները ջրածածկվում են, ինչի հետևանքով ջրի տակ են մնում անտառածածկ հատվածներ՝ հսկայական ծառեր, թփեր, ծառերի արմատներ, շենքեր, շինություններ, ճանապարհներ և տարբեր ենթակառուցվածքներ, որոնք շարունակաբար մաքրման կարիք ունեն:

Գրունտային ջրեր. Տարածաշրջանում առանձնացվում են գրունտային ջրերի երեք հորիզոններ, որոնք միմյանցից առանձնացված են ջրամերժ կավային շերտերով: Առաջին երկու ջրային շերտերը տեղադրված են վերին չորրորդականի հասակի օլիվինային բազալտների և շլակների մեջ: Երրորդ ջրային հորիզոնը տեղադրված է Էոցենի հասակի հիմնականում քայքայված տուֆոբեկչիանների մեջ: Այս առանձնահատկություններով է պայմանավորված որոշ տեղամասերում միայն գրունտային ջրերի տարածվածությունը, իսկ այլ տեղամասերում՝ բացի գրունտային ջրերից, տարածված են նաև ացիսաթթու գազով հարուստ ճնշումային և հանքային ջրեր:

Ստորգետնյա ջրերը բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս երկրի մակերես, ունեն սեզոնային բնույթ: Ջրամերժ շերտերը հանդիսանում են ուլտրահիմքային ապարների կոտրատված մասսան (մազնետիզացված և սերպենտինիտիզացված դունիտները ու սերպենտինիտները), որոնք վերածվել են կավանման առաջացումների: Շրջանում մթնոլորտային տեղումների մի մասը ներծծվելով ապարների շեղքերով ու ծակոտիկներով, բեռնաթափում են սեզոնային բնույթի աղբյուրների տեսքով, իսկ մյուսը ժամանակավոր հոսքերի տեսքով հոսում են դեպի Սևանա լիճ:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է համաձայն՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի՝ անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար: Համաձայն կազմակերպության կողմից 2023թ. 2-րդ եռամսյակի տեղեկագրի՝ Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 18, Սևանա լճի 4 դիտակետում՝ հիմնականում անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար: 2023 թվականի հունիսի 30-ին լճի մակարդակը կազմել է 1900.54 մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 20 սմ-ով:




Կ



Ներկայացվում է Սևանա լճի հիդրոլոգիական ռեժիմը՝ համաձայն Գլխավոր ( [www.armmonitoring.am](http://www.armmonitoring.am)) էլեկտրոնային էջի:

## Գծապատկեր 2

Սևանա լճի հիդրոլոգիական ռեժիմը սեպտեմբերի 5-11-ը. (2022թ.)



Համաձայն «Հիդրոոդերոնութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի  
Էլեկտրոնային կայքի՝ 2022թ. տարեկան տեղեկագրի՝ Մեծ Սևանի ջրի որակը 2022 թվականին  
հիմնականում գնահատվել է 4-րդ («անբավարար» որակ) կամ 5-րդ դաս («վատ» որակ), իսկ  
Փոքր Սևանինը՝ հիմնականում 4-րդ դաս («անբավարար» որակ), երկու դեպքում էլ  
պայմանավորված հիմնականում կենսածին նյութերով:

2023թ. 2րդ եռամսյակում Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-  
արևելք հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Կ

Աղյուսակ 12. Մնանա լճի ջրի որակը 2023 թվականի 2-րդ եռամսյակում

Մայիս

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դասը ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դասը ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Մեծ Սևան, 0.5մ խորություն	Նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 5մ խորություն	Բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 10մ խորություն	Նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 20մ խորություն	Նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	

Աղյուսակ 12. Մնանա լճի ջրի որակը 2023 թվականի 2-րդ եռամսյակում

Մայիս

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դասը ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դասը ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Մեծ Սևան, 0.5մ խորություն	Նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 5մ խորություն	Բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 10մ խորություն	Նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 20մ խորություն	Նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	

«ՀՄԿ» ՊՈՍԿ

«ՀՄԿ» ՊՈՍԿ



**Հուրք**


Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դասըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դասըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Մեծ Սևան, 0.5մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 5մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 10մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 20մ խորություն	Լուծված թթվածին, ԹԲՊ, ամոնիում իոն, մանգան, բոր	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 25մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, մանգան, բոր	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 30մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, մանգան, բոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 0.5մ խորություն	Նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Փոքր Սևան, 5մ խորություն	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 10մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 20մ խորություն	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 30մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 55մ խորություն	ԹԲՊ, ֆոսֆատ իոն, բոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 70մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր	3-րդ	5-րդ
	Լուծված թթվածին, նիտրիտ իոն	4-րդ	
	Մանգան	5-րդ	
Փոքր Սևան, 80մ խորություն	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
	Մանգան	5-րդ	

2023թ. 2րդ եռամսյակում Արփա-Սևան ջրատարի ջրի որակը ճովիևար գյուղից հարավ-արևելք հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

**6.2.6. Բուսական և կենդանական աշխարհ:**

Տարածաշրջանը լեռնային է և բնորոշվում է լանդշաֆտների ուղղաձիգ գոտիականությամբ՝ ցածր և միջին լեռնաանտառային, մարգագետնա-տափաստանային, մերձալպյան, ալպյան: Բուսական անտառները՝ գիհի և կաղնի ծառատեսակներով ոչ մեծ կղզյակներով տեղակայված են Արեգունյաց լեռնաշղթայի ուղղաձիգ լանջերի վրա, իսկ առանձին ծառեր և ծառերի փոքր խմբեր հանդիպում են նաև լճափի այլ հատվածներում:

Նկար 8



Սևանա լճի և տարածքի կենսաբազմազանության պահպանման նպատակով ստեղծվել է «Սևան»ԱՊ-ը:

Սևան ազգային պարկի և պահպանական գոտու տարածքում գրանցված են մոտ 1.600 տեսակ բարձրակարգ բույսեր (Հայաստանում գրանցված բարձրակարգ բույսերի կեսից ավելի) այդ թվում՝ 55 հազվագյուտ ու անհետացող, 23 Էնդեմիկ, որոնք աճում են միայն Սևանի ավազանում: Դրանք են Լրձուն Սևանի, Ոգնաթուփի Գաբրիելյանի և այլն: Բուսականությունը հիմնականում տափաստանային է՝ հացազգային, տարախոտահացազգային/*Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albovii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. Lessingiana* Trin. Et Rupr., *S. Tirsia* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*/:

Կենդանական աշխարհը ներկայացված է ողնաշարավոր կենդանիների 330 տեսակներով, այդ թվում՝ կաթնասուններ՝ 44 տեսակ (գայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, փորսուղ, աքիս, լուսա, ոչ հաճախ նաև արջ և այլն), թռչունների՝ 267 տեսակ, 4 տեսակ երկկենցաղներ, 16 տեսակ սողուններ և 9 տեսակ ձուկ, այդ թվում Սևանի իշխանը, որը գրանցված է Կարմիր գրքում, Սևանի կողակը, Սևանի բեղլուն և այլն:

Շորժա համայնքում հանդիպում են շնագայլ, նապաստակ, լուսան, թխակապույտ աղավախ, արծաթափայլ որոր և անտառային կատու:

**Բուսական աշխարհ:** Տափաստանային գոտին Հայաստանի տարածքի ամենաընդարձակ գոտին է, որը սկսվում է 1500-1600 մ-ից, երկրի հյուսիսային հատվածում հասնում է մինչև 2000 մ բարձրության, իսկ հարավային հատվածում՝ 2400-2500 մ: Գոտին տափաստանային է և գորշ կարբոնատային, անտառային: Աչքի են ընկնում բուսական համակեցությունների բազմազանությամբ՝ հացազգային, տարախոտա-հացազգային/*Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albovii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. Lessingiana* Trin. Et Rupr., *S. Tirsia* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*/: Մարզի հիմնական անտառ կազմող ծառատեսակները հանդիսանում են սոճին, եղևնին, բարդին, ուռենին, թեղին, հացենին, ակացիան, փշատենին և այլ փշատերև ու սաղարթավոր ծառատեսակներ: Սևանա լճի ջրից ազատված հողագրունտները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի, չիչխան, բարդի և այլ):

Ցածրադիր վայրերում աչքի են ընկնում անապատներն ու կիսաանապատները, որոնք առաջացել են լճից ազատված ավազուտների վրա և ունեն երկրորդային ծագում: Այդ տեսակներից որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փոքր թփուտները՝ ցածրաճ գիհուտներ (*Juniperus depressa*) և այլն: Թփատեսակներից ամենամեծ մակերեսները զբաղեցնում է չիչխանը:



Նկար 9. Չիչխան

Սևանի ջրհավաք ավազանի տափաստանային գոտին՝ 1906-2400մ ծովի մակերևույթից բարձր է, հիմնականում ներկայացված է չոր և տիպիկ տափաստաններին բնորոշ խոտաբույսերով՝ շյուղախոտ, փետրախոտ և այլն: Այստեղ աճում են նաև գիհու, մասրենու, արոսենու, կծուխորի, այծատերևուկի և այլ թփուտներ: Բավական շատ են գազերը, ոզնաթփերը, որոնց թվում կան մի շարք հազվագյուտ և անհետացող տեսակներ: Մարդու կողմից առավել յուրացված է հենց այս գոտին, որի զգալի մասը վերածվել է վարելահողերի, իսկ մնացածը ակտիվ օգտագործվում է որպես խոտհարքեր և արոտավայրեր: Տափաստաններում հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքները, նաև հրդեհները բացասաբար են ազդում

բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա: Բնական բուսածածկույթին փոխարինելու են գալիս մշակաբույսերը՝ ցորեն, եգիպտացորեն, արևածաղիկ, պտղատու այգիները, իսկ ողողատներում՝ բանջարեղենի մշակությունը: (UNDP):

Տարածաշրջանում կան անոթավոր բույսերի 1587 տեսակ, 32 ծառատեսակ, 102 թփերի տեսակ, 1146 բազմամյա խոտաբույս և 307 միամյա ու երկամյա բուսատեսակներ: Շուրջ 60 բուսատեսակներ համարվում են դեղաբույսեր և 100-ը՝ ուտելի են: Կան նաև 267 տեսակի սնկեր, որից 100 տեսակը ուտելի են և 24 տեսակը՝ թունավոր: Տեղանքում աճում են հացազգիներին պատկանող շատ բույսեր՝ շյուղախոտի (*Festuca* sp.), որմի (*Lolium* sp.) 95.1և դաշտավլուկների (*Poa* sp.) տարբեր տեսակներ:

Սևան ազգային պարկի և պահպանական գոտու տարածքում գրանցված են մոտ 1.600 տեսակ բարձրակարգ բույսեր (Հայաստանում գրանցված բարձրակարգ բույսերի կեսից ավելի) այդ թվում՝ 55 հազվագյուտ ու անհետացող, 23 էնդեմիկ, որոնք աճում են միայն Սևանի ավազանում: Դրանք են Լրծուն Սևանի, Ոզնաթուփի Գաբրիելյանի և այլն: Բուսականությունը հիմնականում տափաստանային է՝ հացազգային, տարախոտահացազգային /*Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albovii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. Lessingiana* Trin. Et Rupr., *S. Tirsia* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*/:

Ազգային պարկի և պահպանական գոտու տարածքի շուրջ 60 բուսատեսակներ օգտագործվում են որպես դեղաբույսեր, իսկ շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի:

Կարմիր գրքում գրանցված են տարածաշրջանին բնորոշ՝ Խոզանափուշ Ֆյոդորովի-*Cousinia fedorovii* Takht, Լրջուն Սևանի-*Isatis sevangensis* N. Busch, Թրաշուշան հայաստանյան -*Gladiolus hajastanicus* Gabrielian, Հիփիկ Նրբագեղ - *Iris elegantissima* Sosn, Վիշապագլուխ ավստրիական - *Dracocephalum austriacum* L., Գառնառովույտ հայկական - *Oxytropis armeniaca* Sosn. ex Mulk.:



Նկար 10. Վիշապագլուխ ավստրիական



Նկար 11. Գառնառովույտ հայկական

Նախատեսվող գործունեության տարածքում կարմիր գրքում գրանցված բուսատեսակները բացակայում են:

**Կենդանական աշխարհ:** Կենդանական աշխարհը ներկայացված է ողնաշարավոր կենդանիների 330 տեսակներով՝ 44 տեսակ կաթնասուններ՝ գիշատիչներ, միջատակերներ, կրծողներ, չղջիկներ (գայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, փորսուղ, աքիս, լուսա, ոչ հաճախ նաև արջ և այլն), թռչունների՝ 267 տեսակ, 4 տեսակ երկկենցաղներ, 16 տեսակ սողուններ և 9 տեսակ ձկներ:

Կաթնասունները պատկանում են հետևյալ կարգերին.

- Միջատակերներ (Insectivora),
- Կրծողներ (Rodentia),
- Նապաստակներ (Logomorpha),
- Չղջիկներ (Chiroptera),
- Գիշատիչներ (Carnivora),
- Սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (Artiodactyla):

Համաձայն «Գեղարքունիք 1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի՝ մարզի տարածքում հաշվարկվում են 43 տեսակի փափկամարմիններ, 639 տեսակի հողվածոտանիներ, որոնք պատկանում են միջատներին: Դրանցից 6-ը Հայաստանի Էնդեմներ են: Կապտաթիթեռը (*Maculinea nausithous* Bergs), որն հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում:

Սևանա լճի ձկները ներկայացված են սաղմոնազգի-Salmonidae, սիգազգի Coregonidae և ծածանազգի-Cyprinidae ընտանիքներով: Սաղմոնազգիներին են պատկանում Սևանի իշխանը (Sevan Trout-Salmo ischchan Kessler 1877) իր 4 էկոլոգիական ենթատեսակներով՝ Ամառային բախտակ (*S. ischchan aestivalis*), Ձմեռային բախտակ (*S. ischchan ischchan*), Գեղարքունի (*S. ischchan gegarkuni*), Բոջակ (*S. ischchan danilewskii*): Սիգազգիների ընտանիքի ներկայացուցիչը կլիմայավարժեցված սիգն է (Whitefish-Coregonus lavaretus): Ծածանազգի ձկնատեսակներին են պատկանում լճի երկու Էնդեմիկները՝ Սևանի կողակը (*Khrami carp Varicorhinus capoeta sevangi*) և Սևանի բեղլուն (*Sevan 17 barble-Barbus goktschaicus*): 1980-ական թվականների սկզբից լճում սկսել է հանդիպել նաև արծաթափայլ լճածածանը (*Crucian carp-Carassius auratus gibelio*), որը պատահաբար լիճ է ներթափանցել արարատյան դաշտի ջրային համակարգերից:

Տարածաշրջանում հանդիպում են նաև 4 տեսակի երկկենցաղներ՝ Ցատկողներ (Salientia) կարգին պատկանող՝ Լճագորտ (*Rana ridibunda*), Փոքրասիական գորտ (*Rana macrocnemis*), Կանաչ դոդոշ (*Bufo viridis*), Շելկովնիկովի ծառագորտ (*H.a.shelkovnikovi*):

Սողուններից հանդիպում են՝ Սպիտակափոր ժայռային, Նաիրյան ժայռային, Ռոստոմբեկովի ժայռային, Հայկական ժայռային, Վալենտինի ժայռային մողեսները, իսկ օձերից՝ սովորականը, ջրային լորտուները, պղնձօձը, լեռնատափաստանային իժը: Երկկենցաղներից առկա են կանաչ դոդոշը, լճագորտը, փոքրասիական գորտը և շելկովնիկի ծառագորտը[11]:

Ջրային կամ ջրաճահճային կենդանիների համար որպես ապրելավայր ծառայում են Սևանա լճի ջրերը, ափամերձ գոտու ճահճուտներն ու լիճ թափվող գետերի գետաբերանները: Վերջին 4 տասնամյակի ընթացքում Սևանա լճի մակարդակի իջեցումը, ինչպես նաև ճահճուտների արհեստական չորացումը, նախկին ժայռոտ ափերի վերացումը խիստ բացասաբար են անդրադարձել ավազանի կենդանական աշխարհի վրա, որը հատկապես ցայտուն կերպով արտահայտված է թռչունների վրա:

Սևանի ավազանում հանդիպում էին 267 տեսակի թռչուններ՝ ձկնկուլ (Pelecaniformes) - 4 տեսակ, արագիլ, տառեղ, ջրցուլ (Ciconiiformes) - 11 տեսակ, ֆլամինգո (Phoenicopteriformes) - 1 տեսակ, հոպոպ, սագեր, բադեր և այլն: Թռչուններից 48 տեսակը բնադրող են: Այսօր դրանցից շատերը՝ մոխրագույն սագը, տուրպան, կարմրակտուլց և կարմրագլուխ բադերը, սպիտակագլուխ բադը (սավկան), չեն բնադրում լճի տարածքում: Էնդեմ հանդիսացող Սևանի ծովորորի համար բնական միջավայրը դարձել է Էկոլոգիապես անկայուն: Պարկում մեծ պոպուլյացիաներով հանդիպում են՝ մեծ քնամուկը (*Glis glis*), պարսկական սկյուռը (*Sciurus persicus*), անտառային մուկը (*Apodemus sylvaticus*), այծյամը (*Capreolus capreolus*), լայնականջ ոզնին (*Tadarida teniotis*) և այլն:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված են՝ Կաթնասունների 6 տեսակ, (գործ արջը, ջրասամույրը, անտառային կատուն, բեզդարյան այծ-*Capra aegagrus Erleben* և այլն), սողուններից 2 տեսակ(խայտաբղետ՝ Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ-*Eremias arguta transcaucasica Darevsky, 1953*) և փոքրասիական մողեսները- *Darevskia rostombekovi Darevsky 1957*), 39 թռչնատեսակներ (Հայկական որոր-*Larus armenicus*), վարդագույն հավալուսն - *Pelecanus onocrotalus Linnaeus*, ձկնկուլը և այլն), սազանմաններից՝ սպիտակագլուխ բադ կամ սավկա - *Oxyura leucocephala Scopoli*, ձկներից՝ Սևանի իշխանը իր տարատեսակներով, Սևանի բեղլուն (*Barbus goetschaicus Kessler*) և Սևանի կողակը (*Varicorhinus capoeta sevangi, Filippi*) հողվածոտանիներից՝ Արիոն կապտաթիթեռը - *Maculinea arion zara Jachontov*, Մթնշաղային կապտաթիթեռ - *Maculinea nausithous*, Անտեսված կապտաթիթեռ - *Agrodiaetus neglectus Dantchenko*, Նիևայի կապտաթիթեռ - *Agrodiaetus ninae Forster*, Թուրքական կապտաթիթեռ - *Agrodiaetus turcicus Koçak*, գրանցված են միջազգային միության Կարմիր գրքում:



Նկար 12. Հայկական որոր



Նկար 13. Նիևայի կապտաթիթեռ

Շողակաթ համայնքում հանդիպում են շնագայլ, նապաստակ, լուսան, թխակապոյտ աղավնի, արծաթափայլ որոր և անտառային կատու:

Նախատեսվող գործունեության տարածքում կարմիր գրքում գրանցված բուսատեսակները, կենդանատեսակները և կենդանիների բնադրավայրերը բացակայում են:

### 6.2.7 Բնության Հատուկ պահպանվող տարածքներ

Մարզի բնության հատուկ պահպանվող տարածքը «Սևան» ազգային պարկն է՝ **147,456հա** մակերեսով: Այն գտնվում է շրջակա միջավայրի նախարարության կառավարման ներքո, որի գործառույթներն իրականացվում են «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջոցով: Այն բաժանվում է չորս՝ արգելոցային, արգելավայրային, ռեկրացիոն և տնտեսական գոտիների: Պարկի տարածքում են գտնվում «Նորաշենի», «Լիճք-Արգիչի», «Գիլլի» և «Արտանիշի» արգելոցները՝ 7464 հա ընդհանուր մակերեսով, որից ցամաքայինը կազմում է 4289հա, ջրայինը՝ 3175հա: Այստեղ է գտնվում նաև երկու՝ «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային» արգելավայրերն՝ ընդհանուր 2652հա մակերեսով:

Սևան» ազգային պարկը ստեղծվել է ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1978 թվականի մարտի 14-ի «Սևան» ազգային պարկ ստեղծելու մասին» N 125 որոշմամբ, ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N927-Ն որոշմամբ վերակազմակերպվել է որպես «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ պետական հիմնարկ, հաստատվել է պարկի և կազմակերպության կանոնադրությունները, գործառույթների շրջանակը:

«Սևան» ազգային պարկի» (այսուհետև՝ պարկ) գործունեության նպատակը՝ պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է:

Պարկը հանրապետական նշանակության՝ բնության հատուկ պահպանվող տարածք է: Պարկի հողերը հատուկ պահպանվող տարածքների հողեր են, որոնք ներառում են բնապահպանական, պատմական ու մշակութային և այլ նշանակության հողեր, որոնց վրա օրենքով սահմանված կարգով արգելվում է պարկի նպատակներին հակասող գործունեություն:

Համաձայն կառավարման պլանի՝ «Սևան» ազգային պարկի տարածքը Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147 456 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22 697 հա:

Գործունեության տարածքը գտնվում է «Սևան» ԱՊ-ի Սևանա լճի ափամերձ հատվածում :

### 6.2.8 Պատմամշակութային և բնության հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ սահմանվում է Շողակաթ(Ներքին Շորժա) բնակավայրի վարչական տարածքների համար հուշարձանների ցանկը.

**4.67 ՆԵՐՔԻՆ ՇՈՐժԱ գյուղ**

**Աղյուսակ 5**

1	2	3	4	5	6	7	8
1			ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 1 հազ., միջնադար	գյուղից 0.5 կմ ամ, Մասրիկ գետի ձախափնյա սարահարթին	<	1
2			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	14-18 դդ.	եկեղեցու շուրջը	S	2.3: Ենթակայությանը ներկայացված է 5 հուշարձան (2.3.1-2.3.5)
	2.1		Խաչքար	1251 թ.	եկեղեցուց ամ	<	2.1
3			ԽԱԶՔԱՐ	1291 թ.	գյուղի մեջ, տնամերձ հողամասում	<	3
4			ԶՐԱԴԱՑ	19 դ. վերջ-20 դ. սկիզբ	գյուղի հվ եզրին, Մասրիկ գետի և նրա աջակողմյան վտակի միախառնման վայրից վերև	S	4
5			ԶՐԱԴԱՑ	19 դ. վերջ-20 դ. սկիզբ	գյուղի հվ-ամ եզրին, գոմերի մոտ	S	5

**4.74 ՇՈՐժԱ գյուղ**

1	2	3	4	5	6	7	8
1			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	16-17 դդ.	գյուղամիջյան ճանապարհի եզրին, դպրոցից 200 մ հս-ամ	S	1
2			ՂԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղի հս մասում, Շորժա-Աղբերք ճանապարհի երկու կողմում,	<	2: Ղամբարաններն իրականում միայն

				հայկական և արդրե- ջանական գերեզմա- նոցների միջև ընկած սարալանջին		Ճանապարհի աջ կողմում են
3	ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ հվ-աե, ավազահանքերի մոտ, Արտանիշ թերակղզի տանող դաշտամիջյան ճանապարհից ձախ	<	3	
4	ԽԱՉՔԱՐ	1550 թ.	գյուղի մեջ, Սերգեյ Մարգարյանի տնա- մերձ հողամասում	<	5	
5	ՄԱՏՈՒՌ	10-14 դդ.	գյուղի աե եզրին, Եկեղեցուց 200 մ հվ- աե, բլրի գագաթին	S	6	

Գործունեության տարածքը չի առնչվում նշված պատմամշակութային հուշարձանների հետ:

Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտը մատուռն է 1.2կմ հեռավորությամբ:



### 6.2.9 Բնության հուշարձաններ

Գեղարքունիքի մարզում և Սևանի ավազանը հարուստ են բնական հուշարձաններով: Մարզի տարածքում պահպանվել են բազմաթիվ միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ, առանձնապես ուշագրավ բնական հուշարձաններ, խառնարանային լճեր, խարամային կոներ, ընդարձակ քարային ծովեր:

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ մարզում կան 15 բնության հուշարձաններ, որից 7-ը՝ երկրաբանական, 6-ը՝ ջրաերկրաբանական, 1-ը ջրագրական և 1-ը՝ կենսաբանական: Բնական հուշարձանների մի մասն ունի հատուկ պահպանվող տարածքների կարգավիճակ:

Աղյուսակ 6

	Երկրաբանական հուշարձաններ	
21	Սևկատար» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ
22.	Աժդահակ» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ
23	Անանուն» ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլ ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա
24	«Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
25	«Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
26	«Արմաղան» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մաղիսա գյուղից 3.5 կմ արմ
27	«Հայրավանք» բրածո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-ար
	Ջրաերկրաբանական հուշարձաններ	
5	«Սարանց» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
6	«Խաչերի» աղբյուր ծայրամասում	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում
7	«Արցունք քար» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա
8	«Արցունք քար» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա
9	«Արցունք քար» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
10	«Վանքի աղբյուր» աղբյուրների խումբ	Գեղարքունիքի մարզ, Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա
	Ջրագրական հուշարձաններ	
11	«Ակնա» լիճ	Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին
	Բնապատմական հուշարձաններ	
4	«Ենթալայան մարգագետին»	Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ

Գեղարքունիքի մարզ, Սևանի լեռնաշղթայի լանջերի (Շորժա գյուղի շրջակայքում) առկա են նաև «Օֆիոլիտային ապարների» մերկացումները:

2021թվականի հոկտեմբերի 21-ի կառավարության N1718-Ն որոշմամբ հաստատված է նաև «Թառ(Կարմիր Կատար)հրաբուխի երկրաբանական հուշարձանը՝ մոտ 3440մ ծ.մ, որը գտնվում է Գավառ համայնքում, աժդահակ հրաբխից արևմուտք»:

Նախատեսվող գործունեության տարածքից հուշարձանները գտնվում են ավելի քան 1,8կմ հեռավորության վրա, ամենամոտը՝ «Օֆիոլիտային ապարների» մերկացումներն են:





Գործունեության ենթակա տարածքի ամենամոտ հեռավորության վրա գտնվում է Արտանիշի արգելավայրը՝ 5,27 կմ:

### 6.2.10 Սոցիալական

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական տարածքում:

Մարզի տարածքը կազմում է 5352 քառ. կմ, ներառում է 5 քաղաքներ և 93 գյուղական բնակավայրեր: Մարզի տարածքում է գտնվում Սևանա լիճը և «Սևան» ԱՊ-ը: Մարզկենտրոնը Գավառ քաղաքն է: 2022թ. տարեսկզբի դրությամբ մարզի բնակչությունը կազմում է 227,8 հազ. մարդ:

Ներկայացվում է մարզի ներկա վիճակն ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի /armstat.am/ կայք էջի:

Աղյուսակ 7

Տարածքը Territory	5 352 քառ. կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, %	18.0
Համայնքներ, 2022թ. տարեկգրի դրությամբ Communities, as of the beginning of 2022	6
Քաղաքներ Towns	5
Գյուղեր Villages	93
Բնակչության թվաքանակը 2022թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of the year, 2022	227.8 հազ. մարդ/ ths. person
այդ թվում՝ including:	
քաղաքային urban	65.9 հազ. մարդ/ ths. person
գյուղական rural	161.9 հազ. մարդ/ ths. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2021թ., % Share of marz population in the total population of the Republic of Armenia 2021, %	7.7
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2021թ., % Share of urban population size 2021, %	28.9
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	345 183.5 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including: arable land	81 448.7 հա/ ha

2021թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 2.5 %,
- գյուղատնտեսություն 12.2 %,
- շինարարություն 5.0 %
- մանրածախ առևտուր 2.4 %
- ծառայություններ 0.9 %:

Մարզի տնտեսության առաջատար ուղղությունը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները: Մարզում են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը:

**Ճամբարակ համայնք.** Գեղարքունիքի մարզի 5 խոշորացված համայնքներից մեկն է, խոշորացվել է Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում 09.06.2017թ. ՀՕ-93-Ն կատարված փոփոխության արդյունքում: Ճամբարակ քաղաքը՝ նախկինում Կրասնոսելսկ, ձևավորվել է երեք բնակավայրերի միացումից՝ Կրասնոսելսկը, Վերին Ճամբարակն ու Ներքին Ճամբարակը: Տարածքը գտնվում է Արեգունի և Միավորի լեռնաշղթաների միջև՝ Գետիկ գետի հովտում: Մակերևույթը լեռնային է, մասնատված Գետիկով և Նրա վտակներով: Տարածքը գտնվում է 1500-2800մ բարձրությունների վրա(առավելագույնը բարձրությունը Մուրղուզ լեռն է

2993մ): Համաձայն ՀՀ վիճակագրական Կոմիտեի կայք էջի՝ ճամբարակ քաղաքի (2022թ. տարեսկզբին՝ 5.5 հազ. բնակիչ) տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է (Երևանից 119 կմ հեռավորության վրա): Արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած: Կրասնոսելսկի տարածաշրջանում է գտնվում մարզի բնական անտառների ավելի քան 90%-ը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

Համայնքն ունի պատմամշակութային՝ 11-րդ, 15-16-րդ դարերի եկեղեցիներ, իսաչքարեր, բնության հուշարձաններ, որոնք մեծ հետաքրքրություն ունեն զբոսաշրջության զարգացման համար:

Համայնքն ունի հանրակրթական, արվեստի դպրոցներ, նախադպրոցական հաստատություններ, գործում է 1 հիվանդանոց:

**Շողակաթ բնակավայրը** գտնվում է Արեգունի լեռների հարավ-արևելյան մասից դեպի Արտանիշի թերակղզի իջևող ճանապարհին՝ ծովի մակերևույթից 1930-1980մ բարձրության վրա: Շողակաթ գյուղը(նախկինում՝ Շորժա) հիմնադրվել է 1810-ական թվականներին Ռուսաստանի Մոլդովիայի մարզից եկած աքսորականների միջոցով: Գյուղը նախկինում կրել է Նադեժդինո անվանումը: 1932թ. Նադեժդինո գյուղը վերանվանվել է Շորժա: Գտնվում է Սևանա լճի ափից 200մ հեռավորության վրա, մարզկենտրոն Գավառից՝ 95 կմ հյուսիս-արևելք: Շողակաթ բնակավայրի տարածքը 3923.32 հա է, բնակիչների թիվը՝ 608 մարդ: Բնակչությունը նախկինում եղել է միատար, բնակվել են միայն մոլդովացիներ: 1989-1992թթ. գյուղը վերաբնակեցվել է Ադրբեջանից եկած փախստականներով և Արծվաշենից բռնի տեղահանվածներով: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Ունի քրոմիտի պաշարներ: Բնակավայրն ապահովված է համապատասխան ենթակառուցվածքներով՝ էլեկտրամատակարարման, գազամատակարարման, ջրամատակարարման համակարգերով, ունի աղբավայր, գերեզմանոց): Գյուղի միջով է անցնում Երևան-Չոլ ավտոճանապարհը և Երևան-Չոլ երկաթուղին: Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, նախակրթարան, բուժկետ, երկաթուղային կայարան, օդերևութաբանական կայան, մի քանի հանգստյան տներ: Գյուղում և շրջակայքում պահպանվել են մ.թ.ա. 1-ին հզմ.բերդի ավերակներ, դամբարաններ(մ.թ.ա. 2 -1-ին հզմ., եկեղեցի(17-րդ դար) մատուռներ և այլ հնություններ:

Հիմնախնդիրները կապված են առկա համակարգերի վերանորոգման, արդիականացման, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և իրացման, իսկ բնապահպանական խնդիրները՝ Սևանա լճի և Նրա է էկոհամակարգերի վերականգնման և պահպանման հետ:

## 7. Նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, բնառեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի վարչական տարածքում՝ Սևան ազգային պարկի ռեկրացիոն գոտում, Սևանա լճի ափամերձ հատվածում: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1,0 հա:

Տարածքում քանդման աշխատանքներ չեն նախատեսվում, կատարվելու են միայն հողային ածխատանքներ:

### Տարածքի կառուցապատում:

#### 7.1 Տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները.

Համաձայն Ճամբարակ համայնքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ տարածքի կառուցապատումը կատարվելու է 1905 կիշից բարձր հատվածում: Ճարտարապետահատակագծային առաջադրանքով նախատեսվում է.

- Օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից կազմում է 4,0մ, հարևան հողակտորներից՝ 1,0մ:
- Կառուցապատման թույլատրելի բարձրությունը կազմում է 6,0մ:
- Կառուցապատման 25% (կառուցապատման անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին:
- Կանաչապատման 75% (կանաչ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին):

Տարածքում շենք շինությունների քանդման, տեղափոխման աշխատանքներ չեն նախատեսվում: Շինությունները ստորգետնյա հարկեր չեն ունենալու:

Ըստ նախագծային լուծումների կառուցապատման ցուցանիշներն են.

1. Հողամասի մակերեսը - 10000.0մ<sup>2</sup>
2. Շինությունների ընդհանուր կառուցապատման
3. մակերես - 551.02 մ<sup>2</sup> (5.51%)
4. Կանաչապատման մակերես - 7504.98 մ<sup>2</sup> (75.05%)
5. Ավազապատ խաղահրապարակ - 64.0 մ<sup>2</sup> (0.64%)
6. Սալիկապատ անցուղիների մակերես - 80.0 մ<sup>2</sup> (0.8%)
7. Լողափ - 1800.0 մ<sup>2</sup> (18.0%<sup>2</sup>)

Կառուցապատվող տարածքն ներառելու է հետևյալ շինությունները, մակերեսները.

1. Անջարանային շինություն-188,27մ<sup>2</sup>
2. Պահեստ- 29,75մ<sup>2</sup>
3. Խոհանոցային շինություն- 97,0մ<sup>2</sup>

4. Դասասենյակ- 80,0մ<sup>2</sup>
5. Խաղահրապարակ- 64,0մ<sup>2</sup>
6. Ճաշարան-պանդոկ- 90,0մ<sup>2</sup>
7. Տաղավար- 38,25մ<sup>2</sup>
8. Սանհանգույց- 8,13մ<sup>2</sup>
9. Պահակակետ- 9,62մ<sup>2</sup>
10. Գրունտային Էկոավտոկայանտեղի-316,0մ<sup>2</sup>
11. Կանաչապատ տարածք- 7188,98մ<sup>2</sup>
12. Սալիկապատ անցուղի- 80,0մ<sup>2</sup>

Տարածքը ցանկապատվելու է մետաղական՝ 134,91գծմ և փայտե՝ 142,0գծմ երկարության h=0.8մ բարձրության ցանկապատով :

Բոլոր մետաղական շինությունները կառուցվելու են մետաղական կոնստրուկցիաներով, ջերմամեկուսիչ շերտով ծածկված պրոֆիլավոր գունավոր թիթեղով:

Շինություններում տեղադրվելու են նաև լուսավորության, օդափոխության, հրդեհաշիջման համակարգեր: Օդափոխությունը կազմակերպվելու է սան.հանգույցներում, խոհանոցում և ճաշարանում՝ պարտադրված եղանակով: Արտաքին լուսավորությունը կազմակերպվելու է մետաղական հենասյուներով՝ էլեկտրամատակարարմամբ:

Շինությունների հիմքերի բարձրությունը 0.00+ նիշից լինելու է 20սմ:

Սպասարկող անձնակազմի աշխատակիցների համար նախատեսվում (316մ<sup>2</sup>) ավտոկայանատեղի՝ ավազա-մանրախճային հիմքով՝ գետտեքստիլ ցանցով: Ավտոկայանատեղին կարող է ընդգրկել մինչև 20 մեքենա: Ավտոկայանատեղին տեղադրված է գլխավոր մուտքի աջակողմյան հատվածում: Կայանատեղին ունի նաև հետիոտն ճանապարհներ՝ դեպի պահեստ, ճամբարի տարածք և այլ շինություններ: Լցունված ավազի շնորհիվ ջրահեռացումը կատարվելու է բնական եղանակով:

Տարածքում, բացի վերը թվարկված կառուցապատման շինություններից, նախատեսվում է նաև մաքրման կայանի տեղադրում, ինչպես նաև լողափի առափնյա գծի մաքրման, բարեկազման աշխատանքներ:

Տարածքում հարմար տեղաշարժվելու նպատակով նախատեսվում է անցուղիների կառուցում՝ սիզամարգով և բիոսալիկներով, որոնց շուրջ կազմակերպվելու է ծաղկանոց /170 մ2/:

**Չեղեղատար համակարգ.** Տարածքում կնախատեսվի հողային երկայնական միմյանց միացված առվակներ: Այդ առվակներից անձրևաջրերը տարբեր խճային դրենաժով կֆիլտրվեն և կներծծվեն հողային զանգված:

Տարածքի կառուցապատումն իրականացվելու է այնպիսի նյութերով, որոնք չեն վնասի շրջակա միջավայրը: Բոլոր կառուցապատման լուծումները կլինեն համահունչ և ներդաշնակ գոյություն ունեցող լանդշաֆտին և բնությանը, չխաթարելով տարածքի Էկոհամակարգը և հարակից շրջակա միջավայրը:

Շահագործման փուլում ճամբարի առավելագույն բեռնվածությունը նախատեսվում է 55 մարդ:

Նախատեսվող գործունեության նախագիծը կազմվել է ՀՀ-ում գործող նախագծային և շինարարական նորմերին համապատասխան: Նախագծային լուծումներում ապահովված են հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու և համաձայն՝ ՀՀՇՆII-8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» նորմերին համապատասխան:

Շահագործման փուլում տարածքն ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

## **7.2 Շինարարության փուլ.**

Շինարարության իրականացնելու համար գործունեության տարածքում ձևավորվելու է շինհրապարակ:

Շինհրապարակ: Շինհրապարակը լինելու է ամբողջ տարածքը: Շինարարության փուլում աշխատողների առավելագույն թիվը կկազմի 7 մարդ:

Շինհրապարակի սխեման



Green Life



Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների վաճուճում, որի համար նախատեսված է 1 հատ անիվների վաճուման հարթակ՝ 6,0x3,5 մ չափերի: Անիվների վաճում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների վաճուման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների վաճումից առաջացած, ինչպես նաև շինարարական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցին, ուղղորդվելու են տարածքում տեղադրված բիոզուգարան: Անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը միմյանց միացող հողային երկայնական առվակներով կլցվեն տարբեր խոշորության խճային դրենաժով, որոնց միջոցով անձրևաջրերը կֆիլտրվեն և կներծծվեն հողային զանգված:

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր անթափանց ցանցաթաղանթով: Ցանկապատի վրա լինելու է ցուցատախտակ՝ պատվիրատուի, կապալառուի, շինարարական աշխատանքների սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվությամբ:

Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

### **7.3 Հողային աշխատանքներ.**

Հանգստի գոտում ճամբարի կառուցապատման ժամանակ նախատեսվում է իրականացնել մոտ 265մ երկարությամբ կոյուղագծի կառուցում՝ ճամբարից, ճաշարանից դեպի մաքրման կայան, որի արդյունքում կկատարվի մոտ 46,375մ<sup>3</sup> ծավալի հողային աշխատանք: Հանվող հողային զանգվածը (գրունտ) կազմվելու է 46,375մ<sup>3</sup>, որն ամբողջությամբ օգտագործվելու է տարածքի հարթեցման և հետլիցքի նպատակով: Տարածքում բացակայում է բնահողը:

### **7.4 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, շինարարական աշխատանքներ**

Գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

1. Վերամբարձ կռուկ Liebherr FR.tronic 154EC-H10՝-1 հատ
2. Ավտոկռուկ Ивaнoвeц KC-35715-10 կամ տվյալ տեսակին համարժեք -1 հատ
3. Ինքնաթափ ավտոմոբիլ MA3 5550 կամ նրան համարժեք- 3 հատ
4. Բետոնամղիչ ավտոմոբիլ СБ-126 կամ նրան համարժեք էքսկավատոր Hyundai 170W /հիդրոմուրճով /-1 հատ
5. Շարժական կոմպրեսոր ЗИФ - 55 В -1 հատ
6. Էլ. եռակցման սարք СТН 500 կամ նրան համարժեք-1 հատ
7. Էքսկավատոր-2հատ
8. Ձեռքի էլեկտրական գործիքներ
9. Ձեռքի մեխանիկական գործիքներ
10. Ատաղձագործական գործիքներ
11. Ներկարարական գործիքներ:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80\* պահանջներին:

Շինտեխնիկական լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Վերջիններս լինելու են ընկերության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաների կայանման վայրեր չեն նախատեսվում, քանի որ մեքենաներն աշխատելու են ըստ պահանջի: Մեքենաները կայանվելու են գործունեության տարածքին կից՝ ճանապարհի եզրին:

Շինարարական տեխնիկայի և սարքավորումների աշխատանքային ժամանակահատվածում կայանման վայրերում նախատեսվում է ավագի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով: Հնարավորության դեպքում (անհրաժեշտ քանակի դեպքում) աղտոտված ավազը կհանձնվի ճանապարհաշինարարական ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից: Ակտավորվելու են թաքնված աշխատանքները, գրանցելով վարման մատյանում:

## 7.5 Ժամանակացույց

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են համաձայն ժամանակացույցի, որը ներառում է հետևյալ շինարարական աշխատանքները.

- շինարարական հրապարակի կազմակերպում,
- շինմոնտաժային աշխատանքների նախապատրաստում,
- ցանկապատի կառուցում,
- ժապավենային հիմքերի հանույթ, հիմքերի և սյունատակերի կառուցում,
- ծածկեր, կոնստրուկցիաներ,
- մետաղական կոնստրուկցիաների տեղադրում,
- պատերի և տանիքի սենդվիչ սալերի տեղադրում,
- դռների տեղադրում, միջնորմների և հատակների կառուցում,
- տարածքի բարեկարգում և կանաչապատում:

Կառուցապատումը տևելու է 1 տարի /12 ամիս/:

**Ենթակառուցվածքներ.** Բացակայում են ինժեներական ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման համակարգերը:

## 7.7 Էլեկտրամատակարարում

Շինարարության ընթացքում էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի, միանալով «Շորժա» ԲԵԿ-ից սևվող «Ծիծեռնակ» 10կՎ ՕԳ-ի մոտակա հենասյունից՝ ճյուղավորումով: Նախատեսվում է տեղադրել 10ԿՎԱ հզորության 10/0,22կՎ տրանսֆորմատորային ենթակայան՝ համաձայն նախագծի:

## 7.8 Ջերմամատակարարում և օդափոխություն

Շենքերի ջերմամատակարարումը նախատեսված է տաք ջրամատակարարման և ջեռուցման անհատական կաթսաներից՝ էլեկտրասարքերի օգնությամբ: Տաք ջրամատակարարման ներքին ցանցը կատարվելու է պոլիպրոպիլենային խողովակներով: Օդափոխություն. շենքերի օդափոխությունը կատարվելու է խոհանոցներից, սանհանգույցներից և լողասենյակներից՝ բնական օդատարներով, որոնք հորանների միջով բարձրանում են դեպի տանիք:

## 7.9 Ջրամատակարարում. Ջրահեռացում.

Գործունեության ենթակա տարածքում բացակայում է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը:

### Ջրամատակարարում.

Շինարարության փուլում աշխատողների խմելու ջրամատակարարումը կատարվելու է բերովի ջրով՝ շէրով, մինչև ջրամատակարարման համակարգի կառուցումը: Իսկ բանվորների կոմունալ-կենցաղային նպատակով ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Այդ նպատակով տարածքում առկա է -- 6մ3 տարողության մետաղական ջրի բաք:

**Շահագործման փուլում խմելու և կոմունալ-կենցաղային ջրի մատակարարումը կատարվելու է ևս պայմանագրային հիմունքներով: Նախատեսվող գործունեությունը կրելու է ժամանակավոր բնույթ և աշխատելու է շուրջ 4 ամիս: Կոմունալ-կենցաղային նպատակով օգտագործվելու է տարածքում գոյություն ունեցող 6մ3 ծավալով ջրի մետաղական բաքը, ինչպես արդեն նշվեց, բաքը լցվելու է ջրամատակարար կազմակերպության կողմից, պայմանագրային հիմունքով: Ջրի բաքը հետագայում կարող է ծառայել որպես պաշարապահ ծավալ: Կախված շինության տիպից և կարիքից (բացի օժանդակ տարածքներից) տեղադրվելու են ջրի բաքեր՝ 0,5-2,0մ3 ծավալով, որոնք տաքացվելու են էլեկտրական տաքացուցիչներով: Խմելու ջուրը մատակարարվելու է պատրաստի վիճակում սննդային տարաներով՝ 11-19լ տարողությամբ, գնման միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում կտեղադրվեն դիսպենսերային սարքեր ևս:**

**Գործունեության իրականացման ընթացքում պահպանվելու են պահպանել Առողջապահության նախարարի 2007 թվականի փետրվարի 12-ի թիվ 236-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:**

### Ջրահեռացում

Շինարարության փուլում կեղտաջրերի հեռացման համար տեղադրվելու է բիոզուգարան, իսկ շահագործման փուլում՝ կենսաբանական մաքրման կայան:

### **7.10 Աղբահանություն.**

Շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ՝ շինարարական աղբի տեսքով, որը շաբաթական երկու անգամ հաճախականությամբ կհեռացվի տարածքից մատակարար ընկերության կողմից: Շինաղբի կուտակումը կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝ պարկերի մեջ, չգերազանցելով նախատեսված բարձրության սորմերը: Գործունեության իրականացման հետևանքով առաջանալու է կենցաղային աղբ, որը կառուցապատման փուլում կազմվելու է 840կգ/տարի, շահագործման փուլում 17 400կգ/տարի

Շինարարության փուլում տեղադրվելու են 2 հատ, յուրաքանչյուրը 1.1 չափերի և 2 հատ փոքր աղբաման:

Շահագործման փուլում տարածքի աղբահեռացումը կատարվելու է համաձայն՝ Սևանի համայնքապետարանի կողմից տրված տեղեկանքի՝ պայմանագրային հիմունքներով:

Աղբի կոնտեյներները, որոնք պետք է ունենան փակվող կափարիչներ, կտեղադրվեն հարթակների վրա և կունենան հարմար մերձատար ուղիներ:

### **7.11 Կանաչապատում, բարեկարգում.**

Նախատեսվում է 1092մ<sup>2</sup> մակերեսով կանաչապատում տեղանքին բնորոշ բուսատեսակներով՝ պտղատու ծառերով: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն կանաչապատման նախագծի: Կանաչապատումն իրականացվելու է «Սևան» ԱՊ-ի հետ համաձայնեցված կանաչապատման ծրագրին համապատասխան: Կանաչապատման նախագիծը ներկայացված է ԱՊ-ի համաձայնության: Հավելված 9

Նախատեսվում է տարածքի բարեկարգում՝ ներտարածքային ճանապարհների տեսքով՝ խճազվաքարերով:

Դեպի գործունեության տարածք մոտեցող ճանապարհը լինելու է գրունտային, իսկ հանգստյան գոտու տարածքում հետիոտնի ճեմուղիները լինելու են հիմնականում կանաչապատ՝ մասնակի սալիկապատումով (բուլիժնիկ), սիզախոտերով:

### **7.12 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.**

Շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ խմելու և կենցաղային նպատակով:

**Շինարարության փուլում** աշխատողների խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում, շշերով՝ ըստ պահանջի:

Ջրցանի, աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար օգտագործվող ջուրը բերվելու է ավտոցիստեռնով, որը լցվելու է տարածքում գոյություն ունեցող 25 մ<sup>3</sup> տարողություն ունեցող բաքում: Տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է ջրցան մեքենաներով՝ ըստ պահանջի, պայմանագրային հիմունքներով: Տեխնիկական ջրի մատակարարման պայմանագիրը կապալառուի կողմից կկնքվի գործունեության վերաբերյալ համապատասխան թույլտվությունները ստանալուց հետո՝ շինարարական աշխատանքները սկսելուց առաջ:

**Շահագործման փուլում** հանգստացողների համար խմելու ջուրը կմատակարարվի տարածքում տեղադրված ջրատար բաքից:

Ջուրը նախատեսվում է նաև արտաքին հրդեհամարման համար:

Արտաքին հրդեհամարման համար յուրաքանչյուր կառույցի վրա նախատեսվում հակահրդեհային հիդրանտ, որոնք տեղադրվելու ենք շինությունների արտաքին պատերին:

Շինարարության և շահագործման փուլերում աշխատողների և հանգստացողների կենցաղային և տնտեսական ջրածախսը շինարարության և շահագործման փուլերում ներկայացվում է:

**Շինարարության փուլում** ամենաճանրաբեռնված հերթափոխում աշխատողների առավելագույն թվաքանակը կազմելու է 7մարդ՝ 2 ինժեներատեխնիկական աշխատող և 5 բանվոր:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

Որտեղ՝  $n$  - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է

$N$  - ջրածախսի նորման տեխնիկական աշխատողների համար՝  $0.016\text{մ}^3$ ,

$n_1$  - բանվորների թիվն է,

$N_1$  - ջրածախսի նորման բանվորների համար՝  $0.025\text{մ}^3/\text{մարդ.օր}$

$T$ -աշխատանքային օրերի առավելագույն թիվն ամբողջ շինարարության ժամանակ՝ 12 ամիս՝ 312 օր:

Այսպիսով.

$$W = (2 \times 0.016 + 5 \times 0.025) \times 312 = 1,248\text{մ}^3/2\text{ին.ժամ, միջին օրական } 0,004 \text{մ}^3:$$

**Շահագործման փուլում** աշխատողների և հանգստացողների ընդհանուր թվաքանակը կազմում է 55 մարդ՝ 10 սպասարկող և 45 հանգստացողներ: Շահագործման փուլում խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է, ելնելով առանձին լոգարաններով հյուրատներում 1 հանգստացողի/աշխատողի ջրօգտագործման առավելագույն ծախսից.

$$V_y = n \times 0,14/\text{վրկ կամ } 55/\text{օր}$$

Որտեղ՝ n- հանգստացողների/աշխատողների թիվն է՝ 55

Այսպիսով.

$$V_y = 55 \times 55 = 3025 \text{ օր}$$

$$\text{Այսինքն, } 11 \times 60 \times 10 = 6600 \text{ օր/վրկ}$$

Մեկ օրվա կտրվածքով ընդհանուր ջրօգտագործումն առավելագույն թվով հանգստացողների և աշխատողների համար կկազմի 3,025մ<sup>3</sup>/օր:

Շահագործման փուլում կեղտաջրերի արտահոսքը կկազմի.

$$W_{\text{կենց.կոյ.}} = W_{\text{կ.}} \times (1 - \gamma)$$

Որտեղ,

շահագործման փուլում ջրածախսը

$\gamma$  - կորուստները, ընդհանրացված 5 տոկոս (0.05),

Յետևաբար,

$$W_{\text{կենց.կոյ.}} = 3,025 \times (1 - 0,05) = 2,87 \text{ մ}^3 \text{ օր կոյուղային արտահոսք շահագործման փուլում:}$$

**Կեղտաջրեր.** Շինարարության փուլում տկենցաղային և շինարարական հոսքաջրերի հեռացման համար տեղադրվելու է մեկ բիոզուրան՝ լվացարանով: Բիոզուրանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում կենցաղային հոսքաջրերը կոյուղու բակային ցանցով, ինքնահոս եղանակով, պոլիէթիլենային, պոլիպրոպիլենե և երկաթյա խողովակներով հեռացվելու է դեպի մաքրման կայան:

Նախատեսվում է տեղադրել 1 բլոկային համակարգով, ընդհանուր Եվրոլուս-60 տիպի՝ երաշխավորված կենսաբանական մաքրման կայան, որն ապահովվելու է օրական 12,0մ<sup>3</sup> ծավալով (Q=12.0մ<sup>3</sup>/օր) կենցաղային կեղտաջրերի եռաստիճան մաքրում՝ մինչև 98%:

Կայանը բաղկացած է հետևյալ բլոկներից.

- ընդունիչ խուց,
- ատրացիայի բլոկ,
- պարզեցման բլոկ,
- տիղմի խտացման բլոկ:

Մաքրված կեղտաջրերը բացարձակապես անվտանգ են շրջակա միջավայրի համար և չունեն տհաճ հոտ:



Մաքրման կայանը լինելու 1 բլոկային համակարգով, ընդհանուր 2090 կգ քաշով, 7մ երկարությամբ, 1,9մ լայնությամբ և 2,4մ բարձրությամբ Եվրոլու-60 տիպի՝ երաշխավորված կենսաբանական մաքրման կայան, որն ապահովելու է օրական 12,0մ<sup>3</sup> ծավալով (Q=12.0մ<sup>3</sup>/օր) կենցաղային կեղտաջրերի եռաստիճան մաքրում մինչև 98%:

Այն անցել է Ռուսաստանի հանրապետության Առողջապահության նախարարության փորձաքննությունը և սերտիֆիկացված է ՌՖ Պետստանդարտի կողմից:

Կեղտաջրերի մաքրումից հետո կենսաբանական մաքրման կայանի ելքում ցուցանիշները կլինեն նորմերին համապատասխան՝ ԹԿՊ20 10-20 մգ/լ սահմաններում, ԹԶՊ 70-100 մգ/լ, N և NH4 իոնների պարունակությունը 15-20 մգ/լ: Կոյուղու ներտարածքային ցանցը իրականացվելու է պոլիէթիլենային ծալքավոր SN8 տիպի խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով և դիտահորերով: Ճիշտ շահագործման դեպքում այն կարող է աշխատել երկար ժամանակ՝ մոտ 50 տարի:

Օդափոխման բաքում առաջանում է ակտիվացված տիղմ, որը կառուցվածքով շատ նման է գետի տիղմին և արժեքավոր պարարտանյութ է: Կուտակված չեզոք տիղմը, որը բաղկացած է անօրգանական միացություններից (մասնավորապես նիտրատներից և ածխաթթու գազից) պարբերաբար հեռացվում է (տարին 2 անգամ) համապատասխան մասնագիտական ծառայությունների միջոցով՝ պայմանագրային հիմունքներով:

Կայանի տեղադրման համար հիմք է ընդունվել կեղտաջրերի հաշվարկային ելքերը՝ (2,87մ<sup>3</sup>/օր) հանգստյան գոտում առավելագույն հանգստացողների և աշխատողների քանակի հաշվարկով:

Ռոզգման նպատակով հետագայում նախատեսվում է մաքրման կայանին միացվող պոմպակայանի կառուցում, որը վերգետնյա խողովակով կիրականցվի կաթիլային ոռոգում: Իսկ մինչ ոռոգման ցանցի կառուցումը ծառերի կաչողականության ապահովման նպատակով կիրականցվի ծառերի խնամք ջրցան մեքենաների միջոցով վճարովի հիմունքով:

Ընկերությունը կարող է տեղադրել նաև կեղտաջրերի նույնատիպ մաքրման աստիճան ապահովող այլ տեսակի մաքրման կայան:

Մաքրման կայանը տեղադրվելու 1905 կիշից բարձր:

Մաքրման կայանից մաքրված ջրերը ջրահեռացման բակային ներքին ինքնահոս ցանցով հեռացվելու և օգտագործվելու են տարածքի կանաչապատ հատվածների ոռոգման նպատակով:

Շենքերի տանիքներից անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքաջրերը նույնպես հեռացվելու են դեպի կանաչ տարածքներ:

Ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքները կատարվելու են ՀՀՇՆ 40-01.01-2014՝ «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում», ՇՆուԿ 2.04.02-84՝ «Ջրամատակարարում, արտաքին ցանցեր և շինություններ», ՇՆուԿ 2.04.03-85՝ «Կոյուղու արտաքին ցանցեր և կառուցվածքներ» նորմերին համապատասխան:

**Նյութեր.** Շինարարության փուլում օգտագործվելու են նաև շինարարական նյութեր՝ փայտե կոնստրուկցիաներ, տուֆ քար, բետոն, փայտանյութ, 0,50մմ պրոֆիլ ցինկապատ թիթեղ, մետաղյա դարպասներ, ապակի, պատուհաններ:

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից կամ մասնակի լինելու են արտասահմանյան:

Տարածքում սորուն նյութերի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ նյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Շինարարության ընթացքում բացառվելու են ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի «Սևանա լճի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ ամրագրված նյութերի օգտագործումը:

**Շահագործման փուլ.** շահագործման փուլում շինություններն ապահովված են լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով,

### **8.Շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջությունն վրա հնարավոր ազդեցությունները՝ շինարարության և շահագործման փուլերում**

Շինարարության փուլում գործունեության իրաանցման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունների կանխատեսումները, ինչպես նաև դրանց ուղղված միջոցառումները: Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են՝

- օդային ավազան արտանետումների՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում ծխագազերի, հողային աշխատանքների՝ փոշու,
- ջրային, հողային ռեսուրսների օգտագործման, թափոնների կառավարման,
- Կենսաբազմազանության պահպանման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

### **8.1 Օդային ավազան.**

Գործունեության իրականացման—շինարարության փուլում տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ ծխագազերի և հողային աշխատանքների ընթացքում փոշու տեսքով:

Օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է ժամանակավոր և կարճատև: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապարհի փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործունեության իրականացման ընթացքում շինարարական աշխատանքերը կրելու են ժամանակավոր բնույթ, շենքերը տեղադրվելու են առանց փորման աշխատանքների, ուստի ազդեցությունը օդային ավազանի վրա կլինի նվազագույն և ժամանակավոր:

Շինարարության փուլում բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ՝ նորմերը պահպանելու նպատակով:

Հայտում նախատեսվում են համապատասխան միջոցառումներ՝ օդային ավազան արտանետումները կանխարգելելու, մեղմելու նպատակով:

Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չեն կանխատեսվում, ելնելով գործունեության բնույթից:

### **8.2 Հողային ռեսուրսներ.**

Գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող է, գործառնական նժանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նապատեսված: Գործունեության տարածքի հողային տեսքը ավազային է, բացակայում է խոտածածկը:

Մասնաշենքերի տեղադրման ժամանակ հողային աշխատանքներ չեն կատարվելու: Շինությունները սյուներով (երկաթյա ցից) խրվելու են հողային գրունտի մեջ: Հողային աշխատանքները կատարվելու են միայն մաքրման կայանի տեղադրման և ջրահեռացման ստորգետնյա խողովակների անցկացման ժամանակ:

Տարածքում բացակայում է հողաբուսաշերտը, վերին շերտը խճից, խճավազից, մանրաքեկորներից կազմված հողածածկ է:

Հողային զանգվածն ամբողջությամբ կուտակվելու է տարածքում՝ հատուկ առանձնացված տարածքում և օգտագործվելու է հետլիցքի և հարթեցման համար:

Հողային ռեսուրսների վրա ազդեցությունները կբացառվեն հայտում նախատեսված միջոցառումների կատարմամբ:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցություններ չեն նախատեսվում:

### **8.3 Ջրային ռեսուրսներ.**

Սևանա լճի վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու նպատակով կառուցապատումը կատարվելու է առաջնորդվելով ՀՀ ջրային օրենսգրքի և ջրային ոլորտին առնչվող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Շինարարական աշխատանքների ժամանակ աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շտերով: Ջրցանի և տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է ջրցան մեքենաներով՝ ըստ պահանջի, պայմանագրային հիմունքներով: Շահագործման փուլում մարդկանց համար խմելու ջուրը կմատակարարվի պայմանագրային հիմունքներով:

Կառուցապատումը կատարվելու է Սևանա լճի ափին՝ 35 մետր հեռավորության վրա: ուստի վերջինիս վրա հնարավոր ազդեցությունները բացառելու նպատակով շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները Սևանա լիճ:

**Կեղտաջրերի հեռացում.** շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող 90\*90մ չափերի 1 բիոզուգարանից: Աշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման սարքի միջոցով: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջոցով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Անիվների լվացումից կուտակված հոսքաջրերը 150մ երկարության պլաստմասե խողովակներով ինքնահոս հեռացվելու են դեպի բիոզուգարան:

**Շահագործման փուլում** հողային և ջրային ռեսուրսների մեջ կեղտաջրերի ներթափանցումը կանխարգելվելու նպատակով նախատեսվում է կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայան՝ Եվրոլուս-60 տիպի, որի տեխնիկական բնութագիրը ներկայացված է հավելված 8-ում: Այն ապահովելու է օրական 12,0մ<sup>3</sup> ծավալով (Q=12,0մ<sup>3</sup>/օր) կենցաղային կեղտաջրերի եռաստիճան մաքրում՝ մինչև 98%:

Օդափոխման բաքում առաջանում է ակտիվացված տիղմ, որը կառուցվածքով շատ նման է գետի տիղմին և արժեքավոր պարարտանյութ է: Այն ժամանակ առ ժամանակ հեռացվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կայանի տեղադրման համար հիմք է ընդունվել կեղտաջրերի հաշվարկային ելքերը՝ (2,87մ<sup>3</sup>/օր) հանգստյան գոտում առավելագույն հանգստացողների և աշխատողների քանակի հաշվարկով:

Կայանը համապատասխանում է ՌԴ ՏՊ–4859–002–54899623–2003 պահանջներին և լայն կիրառություն ունի Ռուսաստանում, Բելառուսիայում և այլ երկրներում: Նշված ցուցանիշներով մաքրման կայանի տեղադրումն ապահովվելու է՝ Սևանա լճի ջրի ավաք ավազանի համար սահմանված նորմերի պահպանման պահանջները, սահմանված՝ ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 22-ի՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N75-Ն՝ «ԿԱԽՎԱԾ ՏԵՂԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՋՐԱՎԱՉԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՋՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 1211-Ն որոշմամբ:

Ընկերությունը կարող է տեղադրել նաև կեղտաջրերի նույնատիպ մաքրման աստիճան ապահովող այլ տեսակի մաքրման կայան:

Շահագործման փուլում շինությունների տանիքներից անձրևաջրերը համապատասխան ջրահեռացման համակարգերով՝ ստորգետնյա պլաստմասե 265մ երկարության խողովակներով ինքնահոս հեռացվում են դեպի կոյուղու բակային ցանց Շինարարության և շահագործման փուլերում Սևանա լճի վրա ազդեցությունները բացառելու կամ մեղմելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ:

#### **8.4 Կենսաբազմազանություն.**

Բուսական աշխարհ. գործունեության ենթակա տարածքը անտառապատ է՝ ՏՐԻՍ Շ3 անտառային տիպով: Հիմնականում գերակշռում են ասեղանատերևավոր տեսակները՝ սոճին սովորական ( *Pinus silvestris* L.) և սոճենի Դրիմյանը ( *Pinus nigra* subsp. *Pallasiana* L.), ընդհանուր 500 հատ քանակով: Ծառերը միջին տարիքի են՝ 23-40, բարձրությունը՝ 6-17մ, 0,4 լրիվության ցուցանիշով, ոչ հավասարաչափ, պատկանում են 3-րդ բնիտային դասին: տարածքում առկա են նաև մեկ տասնյակ դեղին ակացիայի թփեր(*Caragana Arutex*)՝1-3մ բարձրությամբ:

Պայմանավորված մարդածին ազդեցություններով՝ տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները:

**Կենդանական աշխարհ.** գործունեության ենթակա տարածքը նախկինում օգտագործվել է որպես լողափ, ուստի արդեն ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Այդ պատճառով տարածքում չկան կենդանիների բնադրավայրեր, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդատեսակներ չկան: Ուստի բուսական և կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցություն չի լինելու:

Շինարարության և շահագործման փուլերում կենսաբազմազանության վրա ազդեցություններ չեն կանխատեսվում:

## 8.5 Թափոններ

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (ավազի, բետոնի, քարի և այլն), (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝  $20\text{մ}^3$  ծավալով շինաղբ
- Կոշտ կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 840 կգ/տարի, շահագործման փուլում՝ 17 400 կգ/տարի
- Յուղոտված լաթեր (ծածկագիրը՝ 58200600 01 01 4)՝ մոտ 2կգ
- Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը - 15%-ից ցածր՝ ծածկագիրը՝ 31402303 01 03 4) –  $3\text{մ}^3$
- Կարծրացած տոմսի թափոններ (ծածկագիրը՝ 55700600 01 01 4)՝ մոտ՝ 0,5կգ
- Մետաղական մասերի մնացորդներ, այլումինե, պղինձե լարերի թափոններ՝ 8կգ/տարի :

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 -րդ դասին:

Շինարարության փուլում շինարարական աղբը կուտակվելու է համպատասխան անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ, իսկ կենցաղային աղբը՝ 2 հատ աղբահավաք տարողության մեջ:

Շինարարության փուլում այլ տեսակի թափոնների կուտակում չի նախատեսվում: Այդ թափոնները Կապալառու կազմակերպության կողմից ամենօր հետ են տեղափոխվելու:

### Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է,

հետևաբար,

$M=7*120=840$ կգ/տարի, օրական՝ 2,6կգ/հաշվարկն իրականացվել է աշխատողների միաժամանակյա առավելագույն ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով:

Շահագործման փուլում կենցաղային աղբի ծավալը կկազմի.

$$M=(45)*360 + 10*120=17\ 400\text{կգ/տարի (17,4տոննա/տարի) կամ } 47.67\text{կգ/օր:}$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 3 հատ 1,1մ<sup>3</sup> տարողության և 6 հատ փոքր կետային աղբամաններ, հաշվի առնելով ճամբարում հանգստացողների և աշխատողների առավելագույն քանակությունը:

Շահագործման փուլում առաջանալու է նաև մաքրման կայանում կեղտաջրերի մաքրումից առաջացող տիղմ տարեկան 0,5մ<sup>3</sup> ծավալով: Համաձայն բնապահպանության նախարարի 2006թ. 430-Ն հրամանի համաձայն դասվում է 4-րդ կարգի թափոնատեսակին՝ 94800500 04 00 4: Տիղմի մաքրումը կատարվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ տեղափոխելով աղբավայր:

Շինարարական և կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու են մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով՝ 3կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր:

Շահագործման փուլում առաջանալու են միայն կենցաղային թափոններ, որոնք տեղափոխվելու են աղբավայր՝ համայնքապետարանի հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

Թափոնների ազդեցությունը հողային ռեսուրսների մեջ կանխարգելելու նպատակով շինարարության և շահագործման փուլերում նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:

## 8.6 Աղմուկ և թրթռում

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՍՏԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Զաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Շահագործման փուլում աղմուկի մակարդակի բարձրացման հետ կապված ազդեցությունները բացակայում են, ելնելով գործունեության բնույթից:

## 8.7 Արտակարգ իրավիճակներ

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում, կապված՝

- բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),
- աշխատանքի ընթացքում շահագործվող շինտեխնիկայի հնարավոր վթարային իրավիճակների,
- հրդեհների առաջացման, հեղուկ նյութերի արտահոսքի հետ:

Արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը գնահատելու, կանխարգելու համար կառուցապատումը պետք է կատարել, ելնելով ՀՀ-ում գործող համապատասխան նորմերի, սկզբունքների, պարտադիր պահանջներից:

Շինարարության և շահագործման փուլերում արտակարգ իրավիճակների հետևանքով հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով հայտնում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

### **8.8 Պատմամշակութային և բնության հուշարձաններ**

Գործունեության ելթակա և հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային և բնության հուշարձանները: Ուստի հնարավոր ազդեցություններ վերջիններիս վրա չի նախատեսվում: Տարածքի հնագիտական շերտերի հնարավոր առկայության վերաբերյալ ուսումնասիրությունները պարտադիր չեն, քանի որ ՀՀ կառավարության/2011 թ.ի մարտի 3-ին N 177-Ն/ որոշմամբ տարածքը ճանաչվել է ռեկրացիոն գոտի՝ բնակչության հանգստի համար, որտեղ յուրաքանչյուր ռեկրեացոն գոտու համար նշված են մշակութային և հնագիտական հուշարձանների մասին տեղեկատվությունը:

Միաժամանակ՝ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

Շահագործման փուլում Պատմամշակութային և բնության հուշարձանների վրա ազդեցություններ չեն կանխատեսվում:

### **8.9 Աշխատանքի անվտանգություն. Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները.**

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ քաղաքաշինական, առողջապահական, բնապահպանական և այլ նորմերի խախտման,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման, օգտագործվող հեղուկ կյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման,
- շինտեխնիկայի շահագործման, արտակարգ իրավիճակների առաջացման,
- շինարարության ընթացքում ոչ բավարար աշխատանքային պայմանների, մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԱԿ-3-480\* նորմերի:

Մարդու առողջության և աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով հայտում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ՝ շինարարության և շահագործման փուլերում:

### **8.10 Սոցիալական.**

Շինարարական աշխատանքներին ներգրավվելու են 7 մարդ, որից 2 ինժեներ՝ մասնագետներ և բանվորներ՝ 5 մարդ: Ներգրավվելու են հիմնականում համայնքի բնակիչները, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

**Շահագործման փուլ.** շահագործման փուլում մասնաշենքերում աշխատելու համար ներգրավվելու են 10 մարդ: Հանգստացողների առավելագույն քանակությունը կազմելու է 45մարդ:

### **8.11 Լանդշաֆտ.**

Գործունեության իրականացումն առաջացնելու է լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, սակայն այն լինելու է համահունչ շրջակա միջավայրի հետ և չի խոչընդոտի տեղանքի տեսանելիությանը: Նախատեսվող մասնաշենքերը լինելու են ժամանակակից լուծումներով և կյութերով շինություն: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը լանդշաֆտի վրա վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ:


Շինարարության փուլում լանդշաֆտի վրա ազդեցությունը մեղմելու նպատակով հայտի բնապահպանական կառավարման պլանով նախատեսված են միջոցառումներ:

### **8.12 Բարեկարգում և կանաչապատում.**

Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, ճանապարհի կարգաբերում: Տարածքում նախատեսվում է 170,0մ<sup>2</sup> սալաքարերով անցուղիների կառուցում՝ հետիոտնի տեղաշարժն ապահովելու համար:

Տարածքը ցանկապատվելու է 0,8մ բարձրության մետաղական՝ 134,91գծմ և փայտե՝ 142,0գծմ երկարության պարիսպով:

Նախատեսվում է զործուևեության ենթակա 1092.0 մ<sup>2</sup> մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ պտղատու ծառերի տեսքով՝ յասաման-19 հատ, սոսի-20 հատ, ծաղկանոց՝ 170մ<sup>2</sup>:



Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է վերգետնյա պլաստիկ խողովակներով (ցնցուղային)՝ մաքրման կայանից դուրս եկող մաքրված հոսքաջրերով կամ չբավարարման դեպքում՝ կենցաղային նպատակներով մատակարարվող ջրով:

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն, այսինքն, 1մ<sup>2</sup> ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0,3-0,4լ ջուր, հետևաբար.

$$W = (M \times 0,4) \times m$$

Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի,  
 m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից,  
 հետևաբար,  
 $W = 6908,98 \times 0,4 \times 25 = 69\ 089,8$  լ/ջուր կամ 69,09մ<sup>3</sup>/տարի ջուր (տարվա կտրվածքով):

## **9.Շրջակա միջավայրի վրա ազդեցության վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը /Բնապահպանական կառավարման պլան/**

Նախատեսվող գործունեության գնահատման հայտում նախատեսվում է Բնապահպանական կառավարման պլան, որը սահմանում է Գեղարքունիքի մարզի ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական տարածքի 15-րդ փողոցի 1/3 հասցեում ճամբարի կառուցման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի, ինչպես նաև թափոնների կառավարման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ: Շինարարության և շահագործման փուլերում նախատեսվող միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

### **9.1 Օդային ավազան.**

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվելու է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում անհրաժեշտության դեպքում կատարվելու է գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,

- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,

- բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ,

- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,

- նվազագույնի է հասցվելու շինիրապարակում օգտագործվող նյութերի և թափոնների քանակը,

- տարածքում նյութերը պահվելու են ծածկված վիճակում անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ, փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար,

- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը:

### **9.2 Հողային ռեսուրսներ.**

Հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները և վերջինիս մեջ վտանգավոր նյութերի և քսայուղերի ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական տեխնիկան ժամանակավոր կայանվելու է ճանապարհին,

- ճանապարհից դուրս տեղակայվող սարքավորումների վայրում փռվելու է ավազ կամ մանրախիճ,

- բուն գործունեության տարածքում յուրի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չեն նախատեսվելու,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների վրա,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- նվազագույնի է հասցվելու բաց փորվածքների քանակությունը և վերջիններիս հետլիցքն իրականացվելու է հնարավորինս կարճ ժամկետներում,

### **9.3 Ջրային ռեսուրսներ.**

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.

- բացառել Սևանա լճի բնական էկոհամակարգի խախտումները,
- բացառել Սևանա լճի ջրի հոսքի, հատակի, ափի փոփոխությունները,
- փոշենստեցման համար ջրցանը կատարել ըստ անհրաժեշտության՝ հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- անձրևաջրերի հեռացման և հավաքման համար նախատեսվելու է պլաստմասե տարր, որն օգտագործվելու է տարածքի ջրցանման նպատակով,
- պարզարևում հավաքված տիղմը հեռացվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ աղբավայր,
- անիվների լվացման հոսքաջրերն ուղղորդվելու են բիոզուգարան,
- բացառվելու է տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումը շինհրապարակում,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,
- շինարարության համար բետոնախառնուրդը բերվելու պատրաստի վիճակում բետոնախառնիչ մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով:  
Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.
- Սևանա լիճ կեղտաջրերի արտահոսքը կանխելու նպատակով շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից,
- բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

### **Շահագործման փուլ.**

- կեղտաջրերի հեռացումը և մաքրումը կատարվելու է բացառապես մաքրման կայանների միջոցով: Այդ նպատակով տեղադրվելու է «Եվրոլուս-60» տեսակի 1 հատ երաշխավորված կենսաբանական մաքրման կայան, որն ապահովվելու է՝ ԹԿՊ20 10-20 մգ/լ սահմաններում, ԹԶՊ 70-100 մգ/լ, N և NH4 իոնների պարունակությունը 15-20 մգ/լ:

-Մաքրման կայանի օդափոխման խցում կուտակված տիղմը պարբերաբար հեռացվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից, պայմանագրային հիմունքներով:

#### **9.4 Կենսաբազմազանություն.**

Նախատեսվող գործունեությունը կազմակերպվելու է այնպես, որպեսզի չհատվեն և չվնասվեն գոյություն ունեցող ծառերը: Գործունեության և հարակից տարածքների կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է .

- գոյություն ունեցող ծառեր պահպանում,
- բազմամյա տնկիների աճեցման, բույսերի նոր տեսակների ներմուծման և կլիմայավարժեցման, վնասատուների դեմ պայքարի ու հողերի պարարտացման նպատակով՝ բույսերի պաշտպանության քիմիական միջոցների և պարարտանյութերի օգտագործման բացառում,
- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցվելու են շինարարական աշխատանքները և տեղեկացնելու են «Սևան»ԱՊ-ին,
- գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության կողմից պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով,
- բուսատեսակների կենսունակության ապահովման նպատակով դրանք տեղափոխել և վերատնկել առանձնացված հատուկ պահպանման գոտում՝ ԱՊ-ի համաձայնությամբ,
- շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,
- հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:

#### **9.5 Թափոններ.**

Շինարարության փուլում առաջացած թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից,
- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնների պահեստավորում չի նախատեսվում,
- շինարարական թափոնները՝ շինադր, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր,

- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու են մասնագիտացված կազմակերպությունների կողմից,
- կենցաղային աղբի և շինաղբի հեռացումը կատարել կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության,
- շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր՝ կենցաղային աղբի տեղափոխման պայմանագրի կնքումից հետո,
- բացառել աղբի կուտակումը շիրապարակից դուրս՝ այլ տարածքներում,
- յուղոտված լաթերը 1/10 հարաբերակցությամբ խառնվելու է կենցաղային աղբին և տեղափոխվելու է աղբավայր,
- շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

### **9.6 Աղմուկ և թրթռում.**

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվել ցերեկային ժամերին,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տրանսպորտային միջոցների շարժիչները:

### **9.7 Արտակարգ իրավիճակներ.**

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով,
- շինարարության և շահագործման փուլերում տեղադրվելու են համապատասխան տարողության ջրի բաք՝ հրդեհաշիջման աշխատանքների ապահովման համար,
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,
- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- տրանսֆորմատորային ենթակայանի տարածքը ցանկապատել,
- ենթակայանի տարածքում տեղադրել լարման, վտանգավորության մասին նախազգուշացնող ցուցանակներ:

Շահագործման փուլում ճամբարն ապահովված է լինելու հակահրդեհային վահանակներով՝ 4 հատ, արտաքին լուսավորության և օդափոխության համակարգերով:

### **9.8 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.**

Շինարարական աշխատանքների ընթացքում գործունեության ենթակա և մոտակա տարածքներում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

### **9.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն.**

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը,

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,

- աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն),

- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ,

- աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (տնակ), որը ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,

- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,

- նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով:

#### **Շահագործման փուլ.**

- պահպանվելու են Առողջապահության նախարարի 2007 թվականի փետրվարի 12-ի թիվ 236-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները,

- ճամբարն ապահովված է լինելու արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, տեսախցիկներով, հակահրդեհային միջոցներով՝ հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով,

- աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ միջոցներով, դեղարկղիկով:

### **9.10 Սոցիալական.**

Ճամբարի կառուցումն ունենալու դրական ազդեցություն, քանի որ նպաստելու է երեխաների հանգստի կազմակերպմանը՝ գեղատեսիլ Սևանա լճի ափին:

Բացվելու են նոր աշխատատեղեր՝ 5-6 մարդու համար, որը կնպաստի համայնքի և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Շինարարության փուլում Սոցիալական բացասական ազդեցություններից խուսափելու համար, շինարարական աշխատանքների ընթացքում պահպանվելու են համապատասխան նորմերի պահանջները, նախատեսված միջոցառումների կատարումը:

Գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

### **9.11 Լանդշաֆտ. բարեկարգում, կանաչապատում.**

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,
- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,
- կատարվելու է տարածքի բարեկարգում, կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում, ներբակային ճանապարհների կառուցում,
- տարածքը ցանկապատում՝ պարիսպով,
- պահպանվելու է լճի բնական էկոհամակարգը,
- բացառվելու է լճի ափի փոփոխությունները:

#### **Կանաչապատում.**

- Կանաչապատում. տարածքի կանաչապատումը կատարվելու է համաձայն՝ կանաչապատման նախագծի: Նախատեսվող կանաչապատման մակերեսը կազմելու է 1092մ2, ընդհանուր՝ 6908,98մ2:

- կանաչապատման աշխատանքները կատարվելու են ծառատնկման միջոցով՝ յասաման-19 հատ, սոսի-20 հատ, ինչպես նաև ծաղկանոց՝ 170մ2:

- կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կաչողականությունն ապահովվելու նպատակով,

- նորատունկ բուսականության, ծառերի չկաչելու դեպքում նոր ծառատեսակներով փոխարինում:

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է կաթիլային եղանակով:

## 10. Մոնիթորինգ.

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

### 10. Մոնիթորինգ.

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Այդ նպատակով նախատեսվում է.

- կատարվելու են Սևանա լճի ջրի և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրություններ,
- խստիվ պահպանվելու են շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերը,
- շինանյութերի գնում՝ արտոնագրված մատակարարներից, բացառելով ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի «Սևանա լճի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ ամրագրված նյութերի օգտագործումը,
- տարածքը կառուցապատվելու է ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշման Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագծի պահանջներին համապատասխան,
- ապահովվելու է հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան,
- թափոնների տեղափոխումը կազմակերպվելու է համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում,
- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը կատարվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում են տարեկան խոշորացված մոտ 1,500,0 հազ. դրամ, ինչը ներառված է շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվի շինարարական կազմակերպության կողմից:

## 11. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է հայտում նախատեսված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի՝ շինարարության և շահագործման փուլերում, արտակարգ իրավիճակներում միջոցառումների պատշաճ իրականացման միջոցները՝ աղյուսակային տեսքով: Այն ամփոփում է ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, նախատեսում է մանրամասնություններ ազդեցությունների մեղմման միջոցառումների, իրականացնող մարմինների և գումարային գնահատումների վերաբերյալ:



Կ

**Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան**

<p align="center"><b>1</b></p>	<p><b>Օդային ավազան</b></p>	<p>Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում անհրաժեշտության դեպքում կատարվելու է գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,</li> <li>- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,</li> <li>-բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը,</li> <li>- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,</li> <li>- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում օգտագործվող նյութերի և թափոնների քանակը,</li> <li>- տարածքում նյութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ՝ փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար,</li> <li>- բացառվելու է տարածքում թափոնների</li> </ul>	<p align="center"><b>Կապալառու</b></p>	<p>«ԲԱՐԻ ՄԱՄԱ» Բարեգործական ՀԿ <b>«Սևան»ԱՊ</b></p>
--------------------------------	-----------------------------	---	--	--

		բաց այրումը:		
2	<b>Հողային ռեսուրսներ</b>	<p>Հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և թափոնների ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- շինարարական տեխնիկական ժամանակավոր կայանվելու է գրունտային ճանապարհի վրա,</li> <li>- բուն գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չեն նախատեսվում,</li> <li>- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների վրա,</li> <li>- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,</li> <li>- նվազագույնի է հասցվելու բաց փորվածքների քանակությունը և վերջիններիս հետլիցքն իրականացվելու է հնարավորինս կարճ ժամկետներում:</li> </ul>	<b>Կապալառու</b>	«ԲԱՐԻ ՄԱՄԱ» Բարեգործական ՀԿ <b>«Սևան»ԱՊ</b>
3	<b>Ջրային ռեսուրսներ</b>	<p>Գործունեության իրականացման շինարարության փուլում Սևանա լճի վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.</p> <ul style="list-style-type: none"> <li>- բացառել Սևանա լճի բնական էկոհամակարգի խախտումները,</li> <li>- բացառել Սևանա լճի ջրի հոսքի,</li> </ul>	<b>Կապալառու</b>	«ԲԱՐԻ ՄԱՄԱ» Բարեգործական ՀԿ <b>«Սևան»ԱՊ</b>

հատակի, ափի փոփոխությունները,  
 - փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,  
 - անձրևաջրերի և արտադրական հոսքաջրերի հեռացման համար նախատեսվելու է պլաստմասե տարա,  
 - բացառվելու է տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումը շինհրապարակում,  
 - շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համայնքում գործող մասնագիտացված կետերում,  
 - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը ստանալու են տեղում՝ հատուկ մետաղյա տարաներում՝ ջրային ռեսուրսների մեջ հոսքաջրերի ներթափանցումը կանխելու նպատակով:

**Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.**

- Սևանա լիճ կեղտաջրերի արտահոսքը կանխելու նպատակով շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում առկա բիոզուգարանից,  
 - բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային

	<b>Շահագործման փուլ</b>	<p>հիմքունքներով:</p> <p>Շահագործման փուլում տեղադրվելու է          -«Եվրոլու 60» տեսակի 1 հատ մաքրման կայան, որն ապահովելու է.          - ԹԿՊ20 10-20 մգ/լ սահմաններում, ԹԶՊ 70-100 մգ/լ, N և NH4 իոնների պարունակությունը 15-20 մգ/լ նորմերին համապատասխանություն:</p>		
4	<b>Կենսաբազմազանություն</b>	<p>- Գործունեության և հարակից տարածքների կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է .          - բազմամյա տնկիների աճեցման, բույսերի նոր տեսակների ներմուծման և կլիմայավարժեցման, վնասատուների դեմ պայքարի ու հողերի պարարտացման նպատակով բույսերի պաշտպանության քիմիական միջոցների և պարարտանյութերի օգտագործման բացառում,          - գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցվելու են շինարարական աշխատանքները և տեղեկացնելու են «Սևան»ԱՊ-ին,          - գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության կողմից պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ, առաջնորդվելով</p>	<b>Կապալառու</b>	«ԲԱՐԻ ՄԱՄԱ» Բարեգործական ՀԿ «Սևան»ԱՊ

		<p>ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով,</p> <ul style="list-style-type: none"> <li>- բուսատեսակների կենսունակության ապահովման նպատակով դրանք տեղափոխելու և վերատնկելու համար առանձնացվելու է հատուկ պահպանման գոտի՝ ԱՊ-ի համաձայնությամբ,</li> <li>- շինարարական աշխատանքներն իրականացվելու են բացառապես ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,</li> <li>- - հնարավորինս նվազեցվելու են տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:</li> </ul>		
5	Թափոններ	<p>Թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից,</li> <li>- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական</li> </ul>	Կապալառու	«ԲԱՐԻ ՄԱՄԱ» Բարեգործական ՀԿ «Սևան»ԱՊ

		<p>թափոնների պահեստավորում չի նախատեսվում,</p> <ul style="list-style-type: none"> <li>- շինարարական թափոնները՝ շինադք, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայրում, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,</li> <li>- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու են մասնագիտացված կազմակերպությունների կողմից,</li> <li>- կենցաղային աղբի և շինադքի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության,</li> <li>- շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր՝ կենցաղային աղբի տեղափոխման պայմանագրի կնքումից հետո,</li> <li>- բացառվելու է աղբի կուտակումը շիրապարակից դուրս՝ այլ հասարակական տարածքներում,</li> <li>- յուղոտված լաթերը 1/10 հարաբերակցությամբ խառնվելու է կենցաղային աղբին և տեղափոխվելու է աղբավայր,</li> </ul>		
--	--	---	--	--

		<p>- շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:</p>		
6	<b>Աղմուկ և թրթռում</b>	<p>Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,</li> <li>- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,</li> <li>- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները:</li> </ul>	<b>Կապալառու</b>	«ԲԱՐԻ ՄԱՄԱ» Բարեգործական ՀԿ «Սևան»ԱՊ
7	<b>Արտակարգ իրավիճակներ</b>	<p>Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվելու են.</p> <ul style="list-style-type: none"> <li>- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով,</li> </ul>	<b>Կապալառու</b>	«ԲԱՐԻ ՄԱՄԱ» Բարեգործական ՀԿ «Սևան»ԱՊ

16

		<p>կրակմարիչներով և շանթարգելներով,</p> <ul style="list-style-type: none"> <li>- շինարարության և շահագործման փուլերում տեղադրվելու են համապատասխան տարողության ջրի բաքեր՝ հրդեհաշիջման աշխատանքների ապահովման համար,</li> <li>- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,</li> <li>- հեղուկ կյուբերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:</li> </ul>		
8	<p><b>Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն</b></p>	<p>Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը,</li> <li>- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողներն, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,</li> <li>-աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն),</li> </ul>	<p><b>Կապալառու</b></p>	<p>«ԲԱՐԻ ՄԱՄԱ» Բարեգործական ՀԿ «Սևան»ԱՊ</p>

		<ul style="list-style-type: none"> <li>- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ,</li> <li>- աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (տնակ), որը ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (վացարան, աթոռ, սեղան և այլն),</li> <li>- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,</li> <li>- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,</li> <li>- նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,</li> <li>- պահպանվելու է աշխատողների միջև սոցիալական հեռավորությունը, պարտադրվելու է դիմակների կրումը:</li> </ul>		
--	--	--	--	--

	<b>Շահագործման փուլ.</b>	<ul style="list-style-type: none"> <li>- ճամբարն ապահովված է լինելու արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, տեսախցիկներով, հակահրդեհային միջոցներով՝ հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով,</li> <li>- աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ միջոցներով, դեղարկղիկով:</li> </ul>		
<b>9</b>	<b>Սոցիալական</b>	<p>Ճամբարի կառուցումն ունենալու է սոցիալական դրական ազդեցություն.</p> <ul style="list-style-type: none"> <li>- բացվելու են նոր աշխատատեղեր՝ 5-6 մարդու համար, նպաստելով համայնքի ու շրջակա բնակավայրերի բնակչության եկամուտների ավելացմանը,</li> <li>- նպաստելու է երեխաների հանգստի կազմակերպմանը՝ Սևանա լճի ափին:</li> </ul>	<b>Կապալառու</b>	«ԲԱՐԻ ՄԱՄԱ» Բարեգործական ՀԿ «Սևան»ԱՊ
<b>10</b>	<b>Լանդշաֆտ և տարածքի բարեկարգում</b>	<p>Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.</p> <ul style="list-style-type: none"> <li>-շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,</li> <li>-շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է լանդշաֆտը:</li> <li>- պահպանվելու է լճի բնական էկոհամակարգը,</li> <li>- կատարվելու է գործունեության ենթակա տարածքի հարթեցման,</li> </ul>	<b>Կապալառու</b>	«ԲԱՐԻ ՄԱՄԱ» Բարեգործական ՀԿ «Սևան»ԱՊ

		բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ. <b>Կանաչապտում.</b> - կանաչապատման աշխատանքները կատարվելու են կանաչ խոտի ցանքսի և ծառատնկման միջոցով: Տնկվելու են տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներ:		
--	--	--	--	--

**12.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ**

հհ	Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Վայրը	Իրականացման ձևը	Ժամանակամիջոց	Կատարող
1	Շինարարության ընթացքում ջրային և հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և կեղտաջրերի ներթափանցման բացառելում	Սևանա լճի ջրի և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրություններ՝ լճի և հողային ռեսուրսների աղտոտումը բացառելու նպատակով, Բիոզուգարանի տեղադրում -կեղտաջրերի մաքրման կայանի տեղադրում	Գործունեության ենթակա տարածքում	Տեսողական դիտարկումներ  ստուգումներ	Շինարարության փուլում  Շահագործման փուլում	<b>Կապալառու «Սևան»ԱՊ «ԲԱՐԻ ՄԱՄԱ» Բարեգործական ՀԿ Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին</b>

						<b>«Սևան»ԱՊ</b>
<b>2</b>	<b>Աշխատանքի անվտանգություն</b>	<p>-Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն</p> <p>-հակահրդեհային պահանջների ապահովում՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան:</p>	Գործունեության իրականացման ենթակա տարածքում	ստուգումներ	Շինարարության ընթացքում	«ԲԱՐԻ ՄԱՄԱ» Բարեգործական ՀԿ «Սևան»ԱՊ Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին
<b>3</b>	<b>Նյութեր</b>	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից, բացառելով ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի «Սևանա լճի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսաձին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N	Լիցենզավորված կազմակերպությունների պահեստներ	Մատակարարման ընթացքում	Շինարարության փուլում	<b>Կապալառու</b> «ԲԱՐԻ ՄԱՄԱ» Բարեգործական ՀԿ

		57 որոշմամբ ամիագրված կյուբերի օգտագործումը:				
4	<b>Թափոն</b>	Թափոնների կանոնավոր տեղափոխում:	Գործունեության ենթակա տարածքից	համապատասխան պայմանագրերի հիման վրա	Շինարարության ընթացքում	<b>Կապալառու</b>
5	<b>Շինտեխնիկա և տրանսպորտային միջոցներ</b>	- շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում, - շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղման իրականացում:	-շինհրապարակ	- շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:	Շինարարարական աշխատանքների կատարման ընթացքում	<b>Կապալառու</b>



### 13. Հանրային քննարկումներ

Հայտի շրջանականերում գործունեության վերաբերյալ իրականացվել է հանրային քննարկում՝ համաձայն Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՀ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի և ՀՀ կառավարության 1325-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում: Հանրային քննարկմանը ներկա էին համայնքի գործունեություն իրականացնող ընկերության ներկայացուցիչները, բնակիչներ: Քննարկման արդյունքում նախագծի վերաբերյալ համայնքը տվել է իր նախնական համաձայնությունը:

Հայտում ներառվել են հանրային քննարկման ընթացքում բարձրացված բոլոր դիտարկումները: Հավելվածներ 10,11:

#### Օգտագործված հապավումները

**ՇՄ**՝ նախարարություն՝ շրջակա միջավայրի նախարարություն

**ՇՄԱԳ**՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

**ԲՀՊՏ**՝ Բնության հատուկ պահպանվող տարածք

**ՍՊԸ**՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

**ՊՈԱԿ**՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություն

**Սևան ԱՊ**՝ «Սևան» ազգային պարկ

**(ԼԳ)**՝ Լողափի գոտի

#### Գրականություն

1. ՇՊ 31.13330.2012 ՍՆԻՊ 2.04.02-84\* Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառույցներ:
2. Քաղաքաշինության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ:
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՍԱՐՁԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ Ռազմավարություն
4. ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 2-ի նիստի N87 արձանագրություն:
5. ՀՀՇՆ II - 7.01-96 «Շինարարական կլիմայաբանություն»
6. «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույց:
7. ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի»

N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:

8. «Սևան»ԱՊ-ի կառավարման պլան:
9. «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-1» տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթ:
10. Առողջապահության նախարարի 2007 թվականի փետրվարի 12-ի թիվ 236-Ն հրաման:



ka

Սեփականաշնորհման վկայականը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՏԱՍԱՐԻ ԻՐԱՎՈՆՔԻ ԵՎ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 2 մարտի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով՝

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**

«ԲԱՐԻ ՄԱՄԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԿ

**2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒՎԱՅԻՆ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Մարզ Գեղարքունիք, համայնք Շողակաթ գյուղ Շողակաթ 15-րդ փողոց 1/3

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ**

Հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր 20.01.2020թ. ս/մ 193

**4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

Կադաստրային ծածկագիրը՝ 05-074-1086 0122

Մակերեսի չափը (հա)՝ 1

Նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հանգստի համար նախատեսված Գրանցված իրավունքի տեսակը՝ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՎԿԱՅԱԿԱՆ N 02032020-05-0046, գաղտնաբառ՝ VUSYXYXMB8Z6

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի  
www.e-cadastre.am կայքի միջոցով

**5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

- 1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ**

Առկա են 148.6 քմ ինքնակամ կառուցված շինություններ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Խոսրով Իսրայելյան

Ջրաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՎՎԱՅԱԿԱՆ N 02032020-05-0046, գաղտնաբառ՝ YU5YXYXMB8Z6

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կորոշվի Ե. Կառավարիչ Կադաստրի կոմիտեի-ի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքի միջոցով

Էջ 2/2

Կադաստրի կոմիտեի

Green Life

Հավելված 2.

Ճարտարապետահատակագծային առաջադրանք





ka





Նախատեսվող տարածքի Հատակագիծ








Կադաստրային քարտեզը՝ կոորդինատներով

Գեղարքունիքի մարզ  
Շողակաթ համայնք  
Հատված կադաստրային քարտեզից  
Կադաստրային ծածկագիր՝ 05-074-1086-0122  
Մասշտաբ 1: 2000



	Կոորդինատներ	
	X	Y
1	8521666.7900	4485403.4460
2	8521667.6500	4485405.3400
3	8521551.0600	4485449.5600
4	8521545.5737	4485434.2714
5	8521525.3883	4485378.0209
6	8521519.5100	4485361.6400
7	8521640.6500	4485340.3400
8	8521640.8770	4485340.9560
9	8521651.2900	4485369.4600

սպասարկման գրասենյակ

Կ.Տ

### Աղբահեռացման պայմանագիր

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Դ N0018

Ճամբարակ համայնք.

«03» հունվար 2023թ.

Ճամբարակի համայնքապետարանը այսուհետև/Պատարոյ/

Որը գործում է կանոնադրության հիման վրա. 22 օրենսդրության պահանջներին համապատասխան, մի կողմից և դեռևս համայնքի ղեկավար Վազգեն Աղայանի, Մյուս կողմից՝ «ԲԱՐԻ ՄԱՍԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԿ, Հասցե՝ 22, քմ Երևան, Գ. Եժովի 46 | Պատվիրատու, /այսուհետ միասին Պայմանագրի կողմեր/, կերպից սույն պայմանագրի դեմոկրատիկ մասին.

#### Պայմանագրի առարկան, կողմերի իրավունքները, պարտականությունները

1.1 Կատարողը պարտավորվում է իր ուժերով ու միջոցներով իրականացնել Պատվիրատուի կենսագործունեության հետևանքով առաջացած աղբի կուտակման հավաքման /փոխադրման, հեռացման/ այսուհետ Ցառայություն/ աշխատանքներ՝ շրջիկ աղբահավաք մեքենաների միջոցով, (իսկ աղբարկղերի առկայության դեպքում՝ աղբարկղերից), 22 օրենսդրությամբ և համայնքի կողմից սահմանված կարգերին համապատասխան:

1.2 Պատվիրատուն պարտավորվում է կատարել ծառայության համար համայնքի ավագանու կողմից սահմանված 50 դր/մ<sup>2</sup> սակագնով, շինության ընդհանուր մակերեսի համար 4000/ չորս հազար հարյուր 22 դրամի չափով ամսական վճարում: Պատվիրատուն պարտավոր է կատարել վճարումը Կատարողի պայմանագրում նշված բանկային հաշվեհամարին, եռամսյակը մեկ՝ մինչև հաջորդող ամսվա 15/տասնհինգը՝ ներառյալ:

1.3 Կատարողը պարտավորվում է պատշաճ ապահովել Պատվիրատուի բնակաձևը գործունեությունից առաջացած աղբի հավաքումն ու փոխադրումը շաբաթվա ընթացքում մեկ անգամ: Սահմանված ժամկետում վճարում չիրականացնելու դեպքում Պատվիրատուն պարտավոր է Կատարողին վճարել տուգանք՝ 10000/տաս հազար 22 դրամի չափով, ինչպես նաև տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար 0.1 տոկոսի չափով՝ չվճարված ապառքի նկատմամբ:

1.4 Պատվիրատուի լրացուցիչ պատվերով կենցաղային, ոչ փոսեզավոր, մեծածավալ աղբի հավաքման և տեղափոխման համար սահմանվում է ծառայության մատուցման վճար՝ յուրաքանչյուր 1/մեկ խորանարդ մետրի համար 3000/երեք հազար 22 դրամ:

1.5 Աղբի թափումը չնախատեսված վայրերում առաջացնում է 22 օրենսդրությամբ և համայնքի ավագանու կողմից սահմանված վարչական տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով՝ 10000/տաս հազար 22 դրամ:

1.6 Տուգանքի վճարումը չի ազատում Պատվիրատուին արդեն մատուցված ծառայությունների համար վճարելու պարտավորությունից:

1.7 Պայմանագիրը լուծվում է միայն Պատվիրատուի լուծարման դեպքում: Լուծարվելիս Պատվիրատուն պարտավոր է մարել աղբի համար կուտակված ամբողջ գումարը:

1.8 Պատվիրատուն պարտավոր է Կատարողին տեղեկացնել շինության ընդհանուր մակերեսի փոփոխության մասին: Պայմանագիրը վերակնքվում է (ընդհանուր մակերեսի, դրույքաչափի կամ վճարման ժամկետների) պայմաններից որևէ մեկի փոփոխության դեպքում:

1.9 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից և գործում է անորոշ ժամկետով:

1.10 Աղբահավաքման աշխատանքները թերի կատարելու դեպքում Պատվիրատուն կարող է այդ մասին տեղեկացնել Կատարողին (ինտ. 2-22-44): Կատարողը պետք է վերաջնի թերությունները ամենաուշ մինչև հաջորդ աշխատանքային օրը:


Կողմերը հաստատում են, որ կանոնից ընդունում են սույն պայմանագրում նշված պարանները և գիտակցում են, որ դրանց պարտադիր կատարումը դիմում է երկուստեք շահերից:

Պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից:

<p>«Կատարող»</p> <p><b>Ճամբարակի համայնքապետարան</b></p> <p>22, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Գ. Եժովի 125</p> <p>ՀՎՀՀ 08625868</p> <p>Բանկ թիվ I ՏԳԲ 900185001014</p> <p>Ճամբարակի համայնքի ղեկավար՝</p> <p>Վազգեն Աղայան</p>	<p>«Պատվիրատու»</p> <p><b>«ԲԱՐԻ ՄԱՍԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԿ</b></p> <p>22, ք. Երևան, Գ. Եժովի 46</p> <p>ՀՎՀՀ 02262591</p> <p>Տնօրեն՝</p>  
--	--



«ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված էներգամատակարարման տեխպայմանը

 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ELECTRIC NETWORKS OF ARMENIA      ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

« ք. Գյումրի, Գ. Մարտիրոսյան փող. 127 »


N ՏՊ- 550 - 6(10) / 0589  
«30» 09 2020»

**ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**  
**6(10)կՎ լարման**  
**Համաձայն ԷՄՕԿ-ի 14.3 կետի պահանջների**

**Տրվում է՝** "ԲԱՐԻ ՄԱՄԱ" բարեգործական ՀԿ նախագագ Ա. Աղոլյանին  
**"Պատճենը"** "Գեղամա" մ/ճ գլխավոր ճարտարագետ պարոն Հ. Մանուկյանին, "ՀԿԵ" ՓԲԸ-ին  
**Սպառիչի գործունեությունը և հասցեն** ՀՀ Գեղարքունիքի մարզ գ. Շողակաթ 15-րդ փողոց 1/3  
հասցեում բնակավայրի սահմաններից դուրս գտնվող տարածքի էլեկտրամատակարարում  
**Պահանջվող հզորությունը՝ 10 կՎԱ**  
**Մտող ցանցի լարումը՝ 10 կՎ**

1. Տեղադրել 10 կՎԱ հզորության 10/0.22 կՎ տրանսֆորմատորային ենթակայան՝ համաձայն նախագծի:
2. Մտումն իրականացնել "Շորժա" ՔԵԿ-ից սևվող "Ծիծեռնակ" 10կՎ ՕԳ-ի մոտակա հենասյունից ճյուղավորումով՝ համաձայն նախագծի:
3. Ծյուղավորման սկզբում տեղադրել 10կՎ գծային բաժանիչ:
4. Նախագիծը համաձայնեցնել համապատասխան շահագրգիռ կազմակերպությունների, մասնաճյուղի գլխավոր ճարտարագետի և «ՀԷՑ» ՓԲ ընկերության տեխնիկական տնօրենի հետ:
5. **Հաշվառքի սարքերի տեղադրման կետը՝** տրանսֆորմատորի 0.22 կՎ լարման կողմում, տեղադրել և օրինականացնել հաշվառքի սարքեր:
6. Մտնումը կիրականացվի քաղաքաշինության, տեխնիկական և էրդինգային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված գործարկման եզրակացության, «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրված լարման կառուցողության և մասնաճյուղի հետ կնքած էլ. էներգիայի մատակարարման պայմանագրի առկայության դեպքում:

**Տեխնիկական պայմանների կադրաման ժամկետը 1 տարի է:**  
**Տեխնիկական պայմանները նվաճ ժամկետում կադրարդու դեպքում կհամարվի անվավեր:**

**Տեխնիկական կոնոն**  **Գ. Գրիգորյան**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐԽԻՆ

«ՀԵՆՆԵՅԻՆԳԵՂԻ» 2020թ.

ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՑԱՆՔԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N ԳԿԵՂ 32

ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՑԱՆՔԻ

Անվանատեղը «Բարձր Մանուշակ» ԳՊ  
(կազմակերպության/անհատ մեծարկատիրոջ/ ֆիզիկական անձի լիվ անունը/ Ա.Ա.Ը.)

Տեղադրման վայրը Հ.Զ. Արմավիրի մարզի Շարժափայտ Խանայի ԶՏԿԻ  
Ֆորդի 1/3 հասցեի հայաստանի Հանրապետության  
Լրիվ անվանումը ՀՈՒՄԻԱ Կոմպյուտեր ՏԵԼԵՔՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ  
(Էլեկտրատեղակայանի լիվ անվանումը)

Անվանական լարումը 10(կուտ) (ԿՎ)

Լարման տեսակը Մեխանիկական  
(հաստատում/կրկնօրինակ/սխեմատիկ/այլ)

Լարման ֆազերի քանակը \_\_\_\_\_

Հզորությունը 20 (ԿՎԱ:ԿՎտ)

Էլեկտրատեսան աղբյուրը Շարժափայտ Խանայի ՏԵԼԵՔՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ  
ԵԳՄԿ ԳԿՏ

Այտ-կարգադրագրի համարը և ամսաթիվը Ա ԳԿԵՂ 32 ՀԵ Նոյեմբերի 2020թ.

Տեխնիկական պայմանների համարը և ամսաթիվը ԱՊՈՊ-5.5Ը-1(ՏԸ)Կ.5ԸԱ 30.09.2020թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձր Մանուշակ» ԳՊ  
(կազմակերպության/անհատ մեծարկատիրոջ/ ֆիզիկական անձի լիվ անունը/ Ա.Ա.Ը.)

ՀՈՒՄԻԱ Կոմպյուտեր ՏԵԼԵՔՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ  
(Էլեկտրատեղակայանի լիվ անվանումը)

տեխնիկական պայմանագրի համարը և ամսաթիվը: \_\_\_\_\_

Թույլատրվում է տեխնիկական կանոնակարգերի պահանջների:

Թույլատրվում է տեխնիկական պայմանագրի գործարկել:

Կ.Տ Վահագն Կարամյան

Ղեկավար \_\_\_\_\_



«Սևան» ԱՊ ՊՈԱԿ-ի գրությունը տարածքի վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԵՐԶՈՎԱՆ ԱՄԲԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
 «ՍԵՎԱՆ ԱՋԳԱՅԻՆ ՊԱՐԿ»  
 ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA  
 MINISTRY OF ENVIRONMENT  
 "SEVAN NATIONAL PARK"  
 STATE NON-COMMERCIAL ORGANIZATION

ՏՆՕՐԵՆ  
 DIRECTOR

Ս. Սևան, Կ. Բանակի 56 հին, Ֆաքս. (0 261) 2-40-44  
 Sevan, K. Banaki 56, phone, fax: (0 261) 2-40-44  
 WEB: www.sevanpark.am, e-mail: sevansnco@env.am

N 19-2868  
 «14» 08 2023թ.

«Բարի մամա» բարեգործական ՀԿ  
 նախագահ Նարինե Աղոլյանին  
 Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, Այգեգործական 6, 1/2


Հարգելի տիկին Աղոլյան

Ի պատասխան Ձեր գրության հայտնում եմ, որ «Բարի մամա» ՀԿ-ին վարձակալությամբ տրամադրված 1 հա տարածքը գտնվում է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Արտանիշի մ/6 Դրայտիկ տեղամասի 8-րդ քառակուսու 2-րդ անտառամասի ռեկրեացիոն գոտում: Տարածքը գտնվում է ծովի մակարդակից 1905մ բարձրության վրա (40°30'08"45"15"18"E) 3,06 կմ:

Բուսական գերիշխող տիպը անտառայինն է, այստեղ գերակշռում է ասեղնատերևավոր տեսակներից՝ սոճենին սովորական ( Pinus silvestris L.), առկա են նաև սոճենի Ղրիմյան ( Pinus nigra subsp. Pallasiana L.): Երկու տեսակները միասին կազմում են մոտ 500 հատ: Ծառերը միջին տարիքի են 23-40, բարձրությունը 6-17մ՝ լիվության ցուցանիշը 0.4 է և ոչ հավասարաչափ, պատկանում են 3-րդ բոնիտերային դասին, անտառի տիպը ՏՐԽ C3 է: Տարածքում առկա է նաև մեկ տասնյակ դեղին ակացիայի (Caragana Arutex) թփեր՝ 1-3 մ բարձրությամբ: Տարածքի հողը ավազային է, խտածածկը բացակայում է:

Հարգանքով՝  
 տնօրենի ժ/պ  Կ. Մնացականյան

Ս. Գալստյան  
 հին. 0261-2-40-44 



Green Life

ka

## Հավելված 8

### Մաքրման կայանի բնութագիրը

#### ПРОТОКОЛ ЭКСПЕРТИЗЫ ПРОДУКЦИИ

Санитарно-эпидемиологическая экспертиза продукции проведена на соответствие положениям: Раздел 3 «Требования к материалам, реагентам, оборудованию, используемым для водоочистки и водоподготовки»; Раздел 7 «Требования к продукции машиностроения, приборостроения и электротехники» главы II Единых санитарно-эпидемиологических и гигиенических требований к товарам, подлежащим санитарно-эпидемиологическому надзору (контролю); СанПиН 2.1.5.980-00. Гигиенические требования к охране поверхностных вод на основании представленных результатов лабораторных исследований, данных нормативно-технической документации изготовителя продукции.

Результаты лабораторных исследований продукции соответствуют вышеуказанным требованиям:

- Миграция химических веществ из материалов, используемых в конструкции установки в водную модельную среду, мг/дм, не более:
  - железо- 0,3; - никель - 0,02; - марганец - 0,1; - хром - 0,5;
- Напряженность электрического поля частотой 50 Гц, кВ/м, не более - 0,5;
- Напряженность электростатического поля, кВ/м, не более - 15;

После монтажа оборудования с целью исключения неблагоприятного воздействия физических факторов на обслуживающий персонал, должны быть проведены натурные замеры вышеуказанных физических факторов.

- Санитарно-эпидемиологические и гигиенические показатели сточных вод после очистки на установке:

взвешенные вещества, мг/дм<sup>3</sup>, не более — 0,25; биохимическое потребление кислорода (БПК<sub>5</sub>) при 20°С, мг O<sub>2</sub>/л, не более - 2,0; ХПК, мг O<sub>2</sub>/л, не более - 15; нефтепродукты, мг/л, не более - 0,05; азот аммонийный, мг/л, не более - 1,5; нитраты, мг/л, не более - 45; нитриты, мг/л, не более - 3,3; фосфаты, мг/л, не более — 6,0; водородный показатель pH, в пределах - 6,5-8,5; общие колиформные бактерии, КОЕ/100 мл, не более - 500; колифаги, БОЕ/100 мл, не более- 10.

#### ВЫВОДЫ

На основании результатов лабораторных исследований, экспертизы представленной документации, заявленная продукция - Оборудование для коммунального хозяйства: системы биологической очистки хозяйственно-бытовых сточных вод, марки «Евролюс», может быть использована для биологической очистки хозяйственно-бытовых и промышленных сточных вод.

Условия безопасного применения, хранения, транспортирования, маркировки, утилизации продукции в соответствии с требованиями «Единые санитарно-эпидемиологические и гигиенические требования к товарам, подлежащим санитарно-эпидемиологическому надзору (контролю)» утв. решением Комиссии таможенного союза №299 от 28.05.2010»; НД производителя, действующей нормативной документацией.

Эксперт - врач ФБУЗ  
«Центр гигиены и эпидемиологии  
в Владимирской области»

Д. Д. Омельченко

# Green Life

ka

## Հավելված 9.

Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկը

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

29.09.2023թ.

Ճամբարակ համայնք

2023թ. սեպտեմբերի 29-ին ժամը 12.00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ: ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով Գեղարքունիքի մարզի Ճամբարակի համայնքապետարանում՝ Գարեգին Նժդեհի փող., 125 շենք հասցեում, իրականացան հանրային քննարկումներ (1-ին հանրային քննարկում) «ԲԱՐԻ ՄԱՄԱ» բարեգործական ՀԿ կողմից նախատեսվող Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի 15-րդ փողոցի 1/3 Օ5-074-1086-0122 հասցեում ճամբարի, ճաշարանի, դասարանի, տաղավարի, խաղահրապարակի, պահեստի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ:

Բացման խոսքով հանդես եկավ Ճամբարակ համայնքի քաղաքաշինության բաժնի պետ Կարեն Մխիթարյանը:

Հրանուշ Ալեքսանյանը ներկայացրեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքը /այսուհետ Օրենք/, համաձայն որի, ենթակա գործունեությունը ենթակա է փորձաքննության: Նշեց, որ Օրենքով սահմանված կարգով իրականացվել է հանրության ծանուցումը և այսօր իրականացվում են հանրային առաջին քննարկումները նախատեսվող գործունեության հետ կապված: Նշվեց, որ նախնական գնահատման հայտում հաշվի են առնվել տվյալ գործունեությանն առնչվող ՀՀ օրենսդրության պահանջները, մասնավորապես մաքրման կայանի տեղադրումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՃԱՆՊԱԿԱՆ

### ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

19 նոյեմբերի 2014 թվականի N1325-Ն Որոշման համաձայն

«ԲԱՐԻ ՄԱՄԱ» բարեգործական ՀԿ կողմից նախատեսվող  
Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի 15-րդ փողոցի 1/3 05-074-1086-0122 հասցեում ճամբարի, ճաշարանի, դասարանի, տաղավարի, խաղահրապարակի, պահեստի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ  
29.09.2023թ.

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Աշխատանքի վայր/բնակության հասցե Հեռ. համար	Ստորագրություն
1.	Անիտա Կարսյան Կարսյան	0961606558	
2.	Մարկո Չեբրյան	Յամբարակի համայնքի պետական 012448134	
3.	Յուսեպ Ալեքսանյան	Ջոն Արմ Տասնամյակ +37493884625	
4.	Գարեթ Միքայելյան	Յամբարակի համայնքի պետական Ֆուլ-շիֆ-բաժնի գեղ. 077405586	
5.	Վրթուկ Ավետիսյան	Յամբարակի համայնքի պետական 098 59 3482	
6.	Դավիթ Արմենյան	Յամբարակի համայնքի Քեմերի 097-525810	

7.	Կարապետյան Պարոտի	Յամբարակի համայնքի բաժնի	
8.	Լուսինե Գևորգյան	Յամբարակի համայնքի բաժնի	
9.	Ռազմիկ Արսլանյան	Յամբարակի համայնքի բաժնի	
10.			
11.			
12.			
13.			
14.			
15.			
16.			
17.			
18.			



Համայնքի նախնական համաձայնությունը



ka



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՃԱՄԲԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ համայնք,  
ք. Ճամբարակ, Գ.Նժդեհ 125, Հեռ. 026522255,  
026522244, Ֆաքս 026522255,  
chambarak.gegharquniq@mta.gov.am

Սույն թվականի սեպտեմբերի 29-ին Հանրային քննարկման էր ներկայացվել «ԲԱՐԻ ՄԱՄԱ» բարեգործական ՀԿ կողմից նախատեսվող Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի 15-րդ փողոցի 1/3 05-074-1086-0122 հասցեում ճամբարի, ճաշարանի, դասարանի, տաղավարի, խաղահրապարակի, պահեստի կառուցման հարցը: Վերջինիս վերաբերյալ ներկաները դրական արտահայտվեցին:

Ելնելով հանրային քննարկման արդյունքից՝ համայնքը տալիս է նախնական համաձայնությունը գործունեության իրականացման վերաբերյալ:


**Համայնքի ղեկավար՝**



**Վազգեն Աղայան**

106

Հավելված 11. Սևան ԱՊ հետ համաձայնեցված կանաչապատման նախագիծ





ka